Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9408

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Հ. Կ. (Բ) Կ. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Հ. Կ. (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ
ԵՎ Կ. Վ. Հ.-Ի ՄԻԱՑ-
ՅԱԼ II ՊԼԵՆՈՒՄԻՆ

# ԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԵՊԻ ՑԵԽ, ԴԵՊԻ ԲՐԻԳԱԴ

Հ. Կ. (Բ) Կ. ԵՐՔԱՂԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3Kns(47.925
Հ-24

ԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

1 DEC 2009 25 SEP 2006

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ЗКП5(47.925)
Հ-24

Հ. Կ. (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՎ Կ. Վ. Հ.-Ի ՄԻԱՑ-
ՅԱԼ II ՊԼԵՆՈՒՄԻՆ

# ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԵՊԻ ՑԵԽ, ԴԵՊԻ ԲՐԻԳԱԴ

1008
34311

Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

17.09.2013
9408

# ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՍՑՆԵԼ ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

*Ներկա գրքույկում տեղ են գտել ընկ. Կագանովիչի ճառը Մոսկվայի Կոմիտեյի պլենումում, Հ.Կ.(բ)Կ. Յերքաղկոմի 3-րդ պլենումի վորոշումները՝ կուսակցական-կազմակերպչական աշխատանքների մասին և Յերքաղկոմի բյուրոյի վորոշումները՝ կուս-կազմակերպչական աշխատանքների ծավալման ուղղությամբ միջոցառումների և կուս. թեկնածուների մեջ տարվելիք աշխատանքների մասին:*

*Տպագրության հանձնելով այս վորոշումները, մենք հետապնդում ենք ա՛յն միտքը, վոր ի մի ամփոփենք այն բոլոր ձեռնարկումները, վորոնք պետք է նպաստեն Հ. Կ.(բ)Կ. Յերքաղկազմակերպության ստորին ողակներին՝ ցեխային բջիջներին, կուսխմբակներին և կուսկազմակերպիչներին՝ կուսակցական աշխատանքն ավելի բարձր աստիճանի վրա դնելուն:*

*Ի հարկե, այս նպատակն իրագործելու և կուսակցական աշխատանքն ավելի բարձր աստիճանին հասցնելու խնդիրը* և վո՛չ մի դեպքում չի լուծվում վորոշումներով և բանաձևերով. *կուս-կազմակերպչական աշխատանքը բարձր աստիճանի հասցնելու գործը կախված է նրանից, թե վորքան մենք ի վիճակի կլինենք բոլշևիկորեն ձեռնարկել կենդանի մարդկանց* կազմակերպմամբ, կուսակցական ուժերի ճիշտ դասավորմամբ, *մեր աշխատանքի ամեն մի բնագավառ կուսակցական ղեկավարությամբ ապահովել: Կուսաշխատանքի վերակառուցումը, այսպիսով, վո՛չ մի դեպքում չպետք է սահմանափակվի կազմակերպչական կառուցվածքը փոփոխելով.* վերակառուցումը պետք է ապահովի ամեն մի կոմունիստի մարտական, քաղաքական-արտադրական դերն *արդյունաբերության մեջ, տրանսպորտում, ձեռնարկում և այլն, պետք է ապահովի մասսայական աշխատանքի բարձր դրվածքը, պետք է ապահովի կուսդաստիարակչական աշխատանքի ծավալումը և խորացումը, կուսթեկնածուների մեջ տարվող աշխատանքն ավելի բարձր աստիճանին հասցնելը:*

*Կուսակցական աշխատանքի վերակառուցումն այն ժամանակ կարդարացնի իրեն, յեթե նրա միջոցով մենք կկարողանանք բարձրացնել կուսակցական ամեն մի ողակի դերը, նրա մարտունակությունը, ապահովելով կուսակցական ամեն մի բջիջի, կուսխմբակի և կազմակերպչի*

օպերատիվ, գործնական ղեկավարությունը, պայքարի հանել տվյալ արտադրության, ձեռնարկի, հիմնարկի, ԲՈՒՀ-ի, վողջ բանվորությունըն ու աշխատավորությունը պլանների կատարման համար: Այս տեսակետից չարաչար սխալվում են այն ընկերները, վորոնց կարծիքով կուսաշխատանքի վերակառուցումը նշանակում է—հրաժարվել արտադրական խնդիրների լուծումից—ընդհակառակը, կուսաշխատանքի իրական վերակառուցումն է, վոր պետք է ապահովի արդֆինպլանների կատարումը:

Կուսաշխատանքի վերակառուցումը նշանակում է նաև կուսակցականի—կուսանդամի և թեկնածուի քաղաքական և արտադրական դերի բարձրացումը, նրա առաջավոր դերի ապահովումը:

Կուսաշխատանքի վերակառուցումը նշանակում է կուսակցության գլխավոր գծի համար տարվող պայքարի ուժեղացումն աշխատանքի բոլոր ճակատամասերում: Ուժեղացնել և կոնկրետացնել պայքարը յերկու ֆրոնտում՝ ընդդեմ աջ թեքման,—ներկա էտապի գլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» ոպորտունիզմի, հաշտվողականության և նեխված լիբերալիզմի, մեծապետական և տեղական նացիոնալիզմի—ահա վերակառուցման հիմնական պահանջներից մեկը:

Անողոք և անխնա պայքար դասակարգային թշնամու դեմ, ավելի անվրեպ դարձնել մեր սլաքները, ուղղված դասակարգային թշնամու և նրա գաղափարախոս՝ ֆաշիստական դաշնակցության դեմ—ահա վերակառուցման հիմնական պահանջներից մեկը:

Ապահովել սոցիալիստական ծավալուն հարձակողականի հաղթանակըն ամենուրեք, մեր աշխատանքի և պայքարի բոլոր ֆրոնտներում, կատարել և գերակատարել հնգամյակի ավարտական տարվա պլանները, առանց պարտքի մտնելու յերկրորդ, սոցիալիստական անդասակարգ հասարակություն ստեղծելու հնգամյակն—ահա կուսաշխատանքի վերակառուցման գլխավոր և հիմնական նպատակը:

Ահա այս բոլորի իրագործման համար, այս նշանաբանի տակ, պետք է աշխատի ամեն մի բջիջ, կուսխմբակ և կուսկազմակերպիչ:



## ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ընկ. Մ. Կագանովիչի համ Կ(բ)Կ Մոսկվայի քաղկոմի պլենումում արտասանած ճառից)

Գոյություն ունեցող փաստերը և նյութերն ավելի ու ավելի համոզիչ կերպով ցույց են տալիս, թե վորքան աճել և գաղափարապես ամրացել է Մոսկվայի կուսակցական կազմակերպությունը:

Առաջին կարևորագույն քաղաքական փաստն է, կազմակերպության քանակական աճումը:

Մեր կուսակցական կազմակերպությունն էլ ավելի զորվեց, էլ ավելի կապվեց բանվորական մասսաների հետ այն պայքարի հողի վրա, վորը մղվում է կուսակցության հիմնական գիծը կիրառելու, հնգամյակը չորս տարում կատարելու համար:

Մի շարք տարիների ընթացքում ամեն տեսակ ոպոզիցիոներները փորձեցին սևացնել, արատավորել ներկուսակցական կյանքը: Դա բավականաչափ հին մեթոդ է: Լենինը, դեռևս 1902–1903 թվականներին բնութագրեց նրանց, ովքեր բոլշևիկյան կուսակցության դեմ, հեղափոխական տակտիկայի նույն քաղաքականության դեմ իրենց մղած պայքարը վարագուրում էյին քննադատության ազատության, անհանդուրժելի ռեժիմին վերաբերյալ մեծադղորդ լոզունգներով և այլն: Լենինը մերկացրեց մանր-բուրժուական «քննադատության» բուն իմաստը՝ ոպորտունիստներն այդ լոզունգներին էյին դիմում, վորպեսզի ռևիզիայի յենթարկեն մեր կուսակցության հիմնական գիծը, ռևիզիայի յենթարկեն մարքսիզմը: Ուստի Լենինն այդ լոզունգը համարում էր հակակուսակցական, վոչ բոլշևիկյան լոզունգ: Հենց այդ լոզունգը մինչև վերջին օրերս փորձում էյին ոգտագործել ամեն տեսակ հակակուսակցական հոսանքներն ու խըմբավորումները:

Կուսակցությունը և բանվոր դասակարգը ջախջախեցին հակահեղափոխական տրոցկիզմը, ջախջախեցին աջ և «ձախ» ուկլոնիստներին: Կուսակցությունը, կուսակցական ղեկավարությունը, կուսակցական գիծը հաղթեցին:

Մեր կենտկոմի լենինյան ճիշտ գիծն ամենասերտ կերպով շաղկապված է յեղել մեր կուսակցական աճման, նրա շարքերի ամրացման հետ:

Ստորին բջիջների աշխատանքի վերլուծումը ցույց է տալիս, թե վորքան նորմալ է կուսակցական որգանիզմի արյան շրջանառությունը, թե վորքան խոր, առանց դժվարության, այլ որգանապես արմատանում

է մեր կուսակցական կազմակերպության կյանքի մեջ կուսակցականների ակտիվության աճումը, մեր կուսակցական դեմոկրատիայի ուժեղացումը: Այդ առանձնապես դրսևորվեց բջիջների բյուրոների վերջին վերընտրությունների ժամանակ, յերբ, վորպես ինքնաքննադատության արդյունք, Մոսկվայում անբավարար համարվեց 100 բջիջ: Այդ մեր մինուսըն է, սակայն հիմնականում դա բնորոշում է կուսակցական կազմակերպության աճումը:

Սակայն մենք չենք տարվում նվաճումներով, այլ աշխատում ենք բարձրանալ այն նոր խնդիրների մակարդակին, վորոնք դրվում են մեր առջև յուրաքանչյուր ետապում:

Մեր սոցիալիստական շինարարության վերջին տարիները նշվեցին վոչ միայն նոր հարյուրավոր գործարանների կառուցմամբ ու գործարկմամբ այլ և մյուս գործարանների հսկայական աճումով, ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի շարքերի լրացումով: Մեր գործարանները չափազանց աճել են, վորովհետև նրանց մեջ մտան հարյուր հազարավոր և միլիոնավոր նոր բանվորներ: Գործարանների կուսկազմակերպությունները հիշյալ ժամանակամիջոցում աճեցին վիթխարի չափով այդ գլխավորապես վկայում է, վոր բանվոր դասակարգի շարքերում աճել է մեր կուսակցության քաղաքական ազդեցությունը: Մեր կուսկազմակերպություններն էլ ավելի ամրացան Կենտկոմի ղեկավարությամբ լենինիզմի համար մղվող պայքարում:

Աճեց մեր կուսակցության կազմակերպությունների աշխատանքի ծավալն ու մասշտաբը: Աճեց կուսակցականների լայն խավերի ընդգրկումը կուսակցական-մասսայական աշխատանքով:

Սակայն այսօր սոցիալիստական շինարարության ասպարեզում մեր առջև դրված հետագա խնդիրները պահանջում են մեզանից էլ ավելի բարձր աստիճանի հասցնել ամբողջ կուսակցական աշխատանքը, նրանք ավելի մեծ պահանջներ են առաջադրում մեր ամբողջ կուսակցական աշխատանքի նկատմամբ:

Մենք պետք է կարողանանք վերակառուցել բջիջների աշխատանքը, նախ և առաջ այնպես, վոր գտնվենք մեր առջև դրված խնդիրների բարձրության վրա՝ ղեկավարել մասսաներին, կազմակերպել նրանց կուսակցության լոզունգների շուրջը, պայքարելու մեր առջև դրված խնդիրների իրականացման համար:

## ԱՄԵՆ ՄԻ ՊՐՈԼԵՏԱՐԻ ԸՆԴԳՐԿԵԼ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

Կուսակցական աշխատանքի կարևորագույն հարցերն են, բարելավել յուրաքանչյուր առանձին բանվորի նկատմամբ մեր կատարած աշխատանքը և իրապես սպասարկել նրան՝ նրա պահանջներին բավարարելու համար: Այդ տեսակետից պետք է մոտենանք մեր կուսակցական բջիջների



աշխատանքին, մասնավորապես Մոսկվայի քաղաքային կոմիտեի զեկուցումների քննարկմանը, վորոնք տալու յեն Դինամո գործարանի, Փավլովի Կոմունայի անվան գործարանի, Սվերդլովի գործարանի, Մոսկվա-Կուրսկ յերկաթուղու դեպոյի կուսկոմները:

Մինչև այժմ մեր կուսակցական բջիջների աշխատանքի խոշորագույն թերությունն է այն, վոր նրանք դեռևս բանվորների ամբողջ մասսային չեն ընդգրկել բոլշևիկյան ազդեցությամբ, մի հանգամանք, վոր առանձնապես կարևոր է այժմ, յերբ աննախընթաց չափով աճել են մեր գործարանները:

Վորպեսզի պարզ լինի, թե վորքան սուր է մեր ագիտացիայի և պրոպագանդի էլ ավելի ծավալելու և բարելավելու հարցը, յես մի քանի թվեր կբերեմ բանվոր դասակարգի կազմի մասին: Միմիայն վերջին 1931 թվականին, համեմատած նախորդ 1930 թվականի հետ, բանվորների թիվն ավելացել է ավելի քան 4 միլիոն հոգով: Մոսկվայում և Մոսկվայի մարզում բանվորների թիվը միայն մի տարվա ընթացքում ավելացել է 660 հազար հոգով:

Ինչ են ցույց տալիս այս քաղաքական թվերը: Նրանք ցույց են տալիս, վոր վիթխարի չափով աճել է մեր սոցիալիստական արդյունաբերությունը, վորը գործարանների հարկի տակ ընդունում է պրոլետարների նոր խավեր՝ սոցիալիզմի մարտիկներ: Այդ լրացումը տեղի յե ունենում արդեն հեղափոխությունից հետո աճած յերիտասարդ բանվորներով: Այդ բանվորների զգալի մասի կուլտուրական մակարդակը բավականաչափ բարձր է, վորովհետև նրանց հսկայական մասը գործուսներն ու յոթնամյակները և այլ հաստատությունները ավարտած գրագետ մարդիկ են: Մյուս կողմից կան զգալի թվով բանվորներ, վորոնք յեկել են գյուղից, նրանց մեջ կան կուլակային տարրեր, նրանց մեջ կան բանվորներ, քաղաքային մանր-բուրժուազիայից:

Այսպիսով մի կողմից կան բանվորներ, վորոնք զգալի չափով աճել են քաղաքականապես և ավելի մեծ ուշադրություն են պահանջում իրենց բոլոր տարակուսանքների և հարցերի լուծմանը,՝ մյուս կողմից կան այնպիսի նոր խավեր, վորոնց դեռևս պետք է յեփել, վերամշակել, տարրական կրթություն տալ, վերադաստիարակել: Վերջապես կան այնպիսի առանձին տարրեր, վորոնց անհրաժեշտ է մերկացնել:

Այդ բոլոր տարբեր խավերին պետք է տարբեր շերտավորված մոտեցում ցույց տալ, համապատասխանորեն վերակառուցելով կուսակցական-մասսայական աշխատանքի, քաղաքական ագիտացիայի մեթոդներն ու յեղանակները:

Բոլոր բանվորներին մեր քաղաքական ներգործմամբ գլխովին ընդգրկելու համար, մեր վճռական խնդիրն է՝ վերակառուցել և ծավալել

կուսակցական մասսայական աշխատանքը: *Մասսայական– կուսակցական աշխատանքը, լայն իմաստով, բաղկացած է* բանվորների պահանջների բավարարելու նպատակով մղվող ագիտացիայից և կազմակերպվող աշխատանքից:

*Յուրաքանչյուր բջիջի, յուրաքանչյուր կուսկոմի արմատական վճռական խնդիրն է ընդգրկել քաղաքական ազդեցությամբ, բոլշևիկյան քաղաքական ներգործմամբ տվյալ ձեռնարկության, ցեխի, ողակի բոլոր բանվորներին:*

*Ուստի կուսակցական աշխատանքի խնդիրը հաջողությամբ լուծելու համար կուսբջիջը պետք է նախ և առաջ* ուշի–ուշով ուսումնասիրի այն մարդկանց ամբողջ կազմը, վորոնց մեջ նա աշխատում է, վորոնց պետք է ղեկավարի նա:

*Այդ տեսակետով դիտեցեք որինակ, թե Դինամո գործարանի կողմից այստեղ ղեկուցում տվող ցեխային բջիջն ու կուսկոմն իրապես ինչ չափով են ընդգրկել պրոլետարների ամբողջ մասսան կամ թեկուզ բոլոր կոմունիստներին:*

*Ի միջի այլոց, այդ գործարանը բնավ չի կարելի համեմատել այն «Դինամո» գործարանի հետ, վորը գոյություն ուներ մի քանի տարի առաջ: Առաջ այդ գործարանում աշխատում էր միայն 2000, այժմ աշխատում է ավելի քան 11 հազար բանվոր: Պրոլետարների այդ թվի 74 տոկոսը առաջին և յերկրորդ կարգի բանվորներ են: Մի տարի աշխատող բանվորները կազմում են 50 տոկոս, մոտավորապես 2–3 տարի աշխատող բանվորների թիվը կազմում է 25–30 տոկոս: Ընդհանուր առմամբ, բանվորների 80 տոկոսը նոր գործարան յեկած մարդիկ են, իսկ հին կադրերը, իսկական վորակյալ բանվորները, այնքան էլ շատ չեն:*

*Այդպես ուրեմն, կարելի յե ուղղակի ասել, վոր այդ գործարանի կուսկազմակերպությունը դեռևս իր բոլշևիկյան ազդեցությամբ չի ընդգրկել բանվորների զգալի մասը: Կարելի յեր հենվել այնպիսի հասարակ փաստի վրա՝ «Դինամո» գործարանի մետաղ թափող ցեխում յես հանդիպեցի յերիտասարդների մի խմբի, 25 հոգի հիանալի տղաներ, վորոնք շատ մարտական, աշխույժ ընկերների տպավորություն թողին վրաս: Հարց եմ տալիս՝ «Ինչպես է քաղաքագիտության հարցը, արդյոք ամեն բան բացատրո՞ւմ են ձեզ»:*

*— Այո՛, բացատրում են:*

*«Իսկ թերթ կարդո՞ւմ եք»:—Մի քիչ շփոթվեցին:*

*«Պրավդա» կարդո՞ւմ եք: «Բվլեարկեց» յերկու հոգի:*

*«Կոմսոմոլսկայա Պրավդա» կարդո՞ւմ եք:—Վոչ մեկը:*

*«Ռաբոչայա Մոսկվա» կարդո՞ւմ եք:—Վոչ մեկը:*

*Գործարանային թերթը կարդո՞ւմ եք: Ասում են՝ վոչ, մեզ պետք չէ*



*այդ թերթը: Ձեզ մոտ կոլեկտիվ ընթերցում կա՞:—Ասում են վոչ, մեզ մոտ չկա:*

*Այդպիսի փաստեր գտանք մենք Նիժնիյ Նովգորոդի ավտոգործարանում: Այնտեղ մենք տեսանք կոմյերիտականների հիանալի հարվածային բրիգադ, վորը հիրավի որինակելի յե աշխատում: Հարց եմ տալիս նրանց՝ քաղաքական ի՞նչ հարցեր են հետաքրքրում ձեզ:—Ի՞նչ ասենք, մեզ դժվար է հասկանալ:—Թերթ կարդո՞ւմ եք:—«Թերթ քիչ ենք կարդում»:*

*Այդպիսի հասարակ փաստերը վկայում են կուսբջիջների քաղաքական թույլ աշխատանքի մասին: Այն ինչ, մեր բանվոր դասակարգը, մեր ամեն մի բանվորը տարբերվում է նրանով, վոր նա վոչ միայն արդֆինպլանը լավ կատարող բանվոր է, այլև Խորհրդային մեծ Միության քաղաքացին է, կապիտալիստական աշխարհի դեմ պայքարող, սոցիալիզմի համար պայքարող մարտիկ է: Ուստի քաղաքական աշխատանքը պետք է ընդգրկի ամբողջ բանվորական մասսային, յուրաքանչյուր առանձին բանվորին:*

*Կուսակցական կազմակերպությունները պետք է կուսակցական լոզունգները պատվաստեն մասսաներին, պետք է կազմակերպեն մասսաներին, այդ լոզունգներն իրականացնելու համար: Պետք է գաղափարական մեծ բարձրության հասցնել մեր ամբողջ քաղաքական մասսայական աշխատանքն այնպես, վոր յուրաքանչյուր տվյալ պահին հնարավոր լինի պարզ և հասկանալի ձևով, առանց խուսափելու սուր հարցերից, պատասխանել բանվորին հուզող հարցերին, գործելով բոլշևիկյան մեթոդով, համոզելով և դաստիարակելով յուրաքանչյուր առանձին բանվորին:*

*Ընկ. Ստալինի դեռ 1925 թվին տված ցուցումների մեջ ասված է, վոր անհրաժեշտ է «ավելի մեծ ուշադրություն նվիրել բանվոր դասակարգի պահանջներին ու կարիքներին, ավելի մտածել դրանց մասին, ավելի քիչ բյուրոկրատիկ ձևականություն մեր կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունների պրակտիկայում, ավելի զգոնություն և հոգատարություն բանվոր դասակարգի դասակարգային արժանապատվության զգացմունքին»:*

*Հետևելով այդ ցուցումներին, անհրաժեշտ է վճռաբար և անհապաղ դուրս մղել կուսակցական, արհմիութենական մասսայական աշխատանքից, մանավանդ քաղաքական ագիտացիայից դեռևս գոյություն ունեցող տրաֆարետ վոճը, սկսած շաբլոն ճառերից: Անհրաժեշտ է բանվորին միշտ պարզ և հասկանալի պատասխանել, նրան հետաքրքրող բոլոր հարցերին, բավարարելով նրա կարիքներին, լուրջ ուշադրություն նվիրելով նրա կենցաղային հարցերին, մանավանդ մատակարարմանն ու ճաշարաններին, ջրին: Իսկ այդպիսի հարցերին դեռևս անհրաժեշտ ուշա–*

դրությունն չի դարձվում: Ահա կենդանի օրինակ. «Դինամո» գործարանի ձուլարանի ցեխում յես հարցրեցի՝ «Ձեզ մոտ ջուր կա՞»—«Այո այստեղ է—պատասխանում է ցեխի պետ Վաննիկովը—կա»: Մոտենում ենք: Իսկ այնտեղ ոչ թե ծորակ, այլ ուղղակի ցցված է փականը բաց ջրատար խողովակը և նրանից թափվում է ջուրը, որը խմում են: Այդ ոչ մի բանի պետք չի: Հարցնում եմ՝ «Ձեզ մոտ ջրի աման կա՞»—պատասխանում են՝—«գտնվում է այնտեղ, հնոցի հետևը, պետք է վերադառնալ»: Յես ասում եմ՝ «Յեկեք վերադառնանք» (ծիծաղ): Հետ դարձանք, հնոցի հետև: Փնտրում է խեղճը, փնտրում է—չգտավ (ծիծաղ): Հարցնում եմ՝ «Ի՞նչ է յեղել»: Այստեղ,—ասում է—դրված է ջրի ամանը: «Յերեկ վերցրել են նորոգելու» (ծիծաղ): «Քանի՞ օր է, որ նորոգում են»—«Վեց օր»: Դե, մի՞թե կարելի յե թույլ տալ, որ ջրի ամանը 6 օրով վերցնեն նորոգելու՝ դուք ինքներդ եք տեսնում, ամառ է, շոգ է, մետաղ թափողը կանգնած է տոթ ցեխում. յեթե նրան յերկու ժամով առանց ջրի թողնենք, նա շոգից ուժասպառ է լինում: Մի՞թե չէր կարելի մի գիշերվա մեջ նորոգել ջրի ամանը: Այդ չեն կարողացել անել: Բայց չէ՞ որ այդ փաստը ցույց է տալիս որոշ խզում մասսաներից, բյուրոկրատիզմի տարրերի արտահայտություն: Այդպիսի փաստեր միանգամայն անթույլատրելի յեն:

Մենք պետք է զգալի չափով ուժեղացնենք մեր մասսայական ագիտացիոն աշխատանքը, բարձրացնենք վերջինս, սրենք մեր բոլշևիկյան ագիտացիայի ու պրոպագանդի բովանդակության ու որակի հարցերը այնպես, ինչպես պահանջում է բանվորական ու կոլտնտեսական մասսաների քաղաքական ակտիվության ու պահանջների աճումը: Պետք է մտքում ունենալ, որ բանվոր դասակարգի մեջ շարունակ լցվում են նոր, թարմ ուժեր, որոնց պետք է դաստիարակել, բարձրացնել նրանց կուլտուրական ու քաղաքական մակարդակը:

Գործարանային կազմակերպությունները՝ վերևից մինչև ներքև պետք է իրենց ուժերի, միջոցների և ուշադրության ծանրության կենտրոնը փոխադրեն ցեխերում, բանվորական մասսաների մեջ կատարվող կուսակցական-մասսայական աշխատանքի ծավալման վրա: Վերցնենք օրինակ՝ ներկայումս ձեռնարկության մեջ կարևորագույն, հանգուցային հարցը՝ խոտանին ու պարապուրդներին վերաբերյալ դեկրետի կենսագործումը: Այդ հարցը պահանջում է ամենալայն չափով ծավալել մասսայական ագիտացիան, բացատրությունները, օրինակելի կերպով կազմակերպել բանվորներին՝ վերացնելու խոտանն ու պարապուրդները, որոնք շոշափում են ամբողջ ձեռնարկության և յուրաքանչյուր առանձին բանվորի նյութական շահերը, ինչպես և ավելի լավ հիմքերի վրա դնել և պատշաճ բարձրության հասցնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը:



Անհրաժեշտ է վճռաբար պայքար մղել բյուրոկրատիկ այն անփութության դեմ, որ ցուցաբերվում է բոլշևիկյան ագիտացիայի ու պրոպագանդի և մասսաների մեջ կատարվող քաղաքական աշխատանքին: Ագիտացիան և պրոպագանդը պետք է դրված լինի շատ ավելի սիստեմատիկ և կազմակերպված հիմքի վրա: Չի կարելի, իհարկե, ասել, որ մեզ մոտ զեկուցումներ քիչ են տրվում: Մեզ մոտ բավականաչափ շատ զեկուցումներ են տրվում: Անհրաժեշտ է միայն զգալի չափով բարելավել զեկուցումների որակը և ավելի սիստեմատիկ դարձնել այդ զեկուցումները: Կուսկոմների ու ռայկոմների նկատմամբ վերադաս Մոսկվայի քաղկոմը պետք է ավելի խնամքով ներգրավի փորձված ագիտատորներ, կուսակցական տեսակետից կոփված զեկուցողներ ու կազմակերպիչներ, սիստեմատիկաբար օգտագործի նրանց, հրահանգի, հայթայթի նյութ ու գրականություն և այլն:

Պետք է բոլշևիկորեն կազմակերպել կուսակցական մասսայական ամբողջ աշխատանքը, քաղաքական ագիտացիան ու պրոպագանդը, այնպես, որ հնարավոր լինի ընդգրկել դրանցով ամբողջ բանվորական մասսային, յուրաքանչյուր առանձին բանվորին, ամեն մի առանձին աշխատավորին: Դրա համար անհրաժեշտ է գլխավոր ուշադրությունը նվիրել անմիջականորեն ցեխերում ու մասսաներում կուսակցական մասսայական աշխատանք և ագիտացիա կազմակերպելու գործին:

Ամբողջ կուսակցական մասսայական աշխատանքը, կուսբջիջի ամբողջ կազմակերպչական կառուցվածքը, քաղաքական ագիտացիան, բոլշևիկյան ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի ծավալումը, արտադրության մեջ միանձնյա ղեկավարման ամրացումը պետք է խիստ կենտրոնացված լինի, յուրաքանչյուր տվյալ պահին սերտորեն շաղկապված լինի այն հրատապ, կոնկրետ հարցերի հետ որոնք հուզում են այսօր բանվորին:

Այժմ յուրաքանչյուր բջիջ իր կուսակցական մասսայական աշխատանքում և քաղաքական ագիտացիայի բնագավառում իր ուշադրությունը առանձնապես պետք է կենտրոնացնի հետևյալ մարտական հարցերի վրա՝ բացատրել մեր միջազգային դրությունը, ամրացնել յերկրի պաշտպանունակությունը, մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին ընկ. Ստալինի վեց պայմանները կատարելու համար, կազմակերպել կոմունիստներին, հարվածայիններին և ակտիվիստներին ներկայիս մարտական խնդիրները իրականացնելու համար, այն է՝ վերացնելու խոտանն ու պարապուրդները, պայքար մղելու հնգամյակի վերջին ավարտական տարվա արդֆինպլանը կատարելու և դրանով իսկ հնգամյակը չորս տարում հաջող կատարելու համար, պայքարել բանվորական մատակարարման լավագույն կազմակերպման, խորհրդային առևտրի ծավալման համար, մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով այդ խնդիրների լուծ-

ման շուրջը՝ (ճագարաբուծություն, խոզաբուծություն, ձկնաբուծության կազմակերպում, բանջարեղենի մատակարարում)։ Մեր գործարանները պետք է շրջապատվեն բանվորներին սպասարկող մի շարք ձեռնարկություններով (բանջարանոց, ճագարաբուծություն, ձկնաբուծություն, լավ ճաշարան, մսուր)։ Գործարանի վարչությունը պետք է միշտ հիշի, որ ինքը խորհրդային, սոցիալիստական ձեռնարկության ադմինիստրացիա յե։ Բջիջը, կուսկոմը պետք է այնպես կազմակերպեն գործը, որ ղեկավարեն բանվորների դրությունը լավացնելու կարևորագույն գործը, դիրեկտորին և մանավանդ արհմիությանը չազատագրելով այդ հոգսերից։

## ՄԻԱՆՁՆՅԱ ՂԵԿԱՎԱՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՃԻՇՏ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օպորտունիզմի բնորոշ գծերից մեկն է՝ բջիջների դերի թերագնահատումը, ներկուսակցական, ներբջիջային կյանքի խզումը կուսակցության հիմնական խնդիրներից։ Մեր կուսակցությունը ներկայացնում է միասնական օրգանիզմ, յուրաքանչյուր բջիջը հանդիսանում է մի մեծ շղթայի օղակը, հսկայական կուսակցության օղակը։ Տվյալ օղակի աշխատանքից, նրա ամրությունից զգալի չափով կախված է ամբողջ շղթայի ամրացումը։ Չի կարելի այսպես մտածել՝ մեր բջիջը փոքր է, փոքր գործարանում, յեթե մեզ մոտ, մեր աշխատանքում ճեղքվածք առաջանա, դա մեծ նշանակություն չի ունենա կուսակցության աշխատանքի համար։ Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր բջիջ հանդիսանում է միասնական շղթայի մի օղակը և մի օղակի ճեղքվածքը անդրադառնում է ամբողջ շղթայի վրա։ Ահա թե ինչու յուրաքանչյուր բջիջ մեծ թե փոքր, գործարանային, խորհրդային ԲՈՒ-ային, կարմիր բանակային, կոլտնտեսական թե խորհտնտեսական—պետք է զգա իր վրա մեր ուշադրությունը, մինչև բջիջի ներքին կյանքի կոնկրետ հարցերի քննությունը։

Սակայն նախքան բջիջի ներքին կառուցվածքի հարցերին անցնելը, յես ուզում եմ կանգ առնել մի հարցի վրա. որը շատ սուր բնույթ է ստացել մանավանդ վերջին շրջանում։ Յես նկատի ունեմ միանձնյա ղեկավարման հարցը, Կենտկոմի որոշումը Նիժնիյ Նովգորոդի ավտոգործարանի մասին, Կենտկոմի որոշումը «Շարիկոպոդշիպնիկ» գործարանի մասին և այլն։ Այստեղ ևս մեր պլենումում ճիշտ կերպով շարունակ կապում են թե ձեռնարկության աշխատանքի և թե բջիջի կուսաշխատանքի բարելավման հետ։ Կուսաշխատողներից շատերը այդ հարցն ըմբռնել են (ինչպես իրենք են ասում) որպես նորմուծություն, իսկ ոմանք բացատրում են որպես «շրջադարձ» արդֆինպլանի համար մղվող պայքարից դեպի կուսաշխատանքը։



Ներկայումս առավել ևս հնարավոր ու անհրաժեշտ է գործարանների ղեկավարների ձեռքում կենտրոնացնել ձեռնարկության տնտեսական կյանքի կառավարման բոլոր թելերը, յերբ մենք ունենք բանվորությունից դուրս յեկած տնտեսական կադրերի անվիճելի աճում և նրանց գործարարական որակավորման բարձրացումը պրակտիկ աշխատանքում։

Միանձնյա ղեկավարության մասին կուսակցության դիրեկտիվների կենսագործումը ձեռնարկություններում, արտադրության ղեկավարման գործում, բանվորության մասնակցության կազմակերպված ձևերի աճման պայմաններում, պետք է սերտ կերպով կապված լինի մասսաների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության հետագա զարգացման հետ՝ արտադրության կազմակերպման ու կառավարման գործում։ «Պետք է սովորել միացնելու աշխատավոր մասսաների գարնանային վարարման նման ափերից դուրս հոսող փոթորկալից միտինգային դեմոկրատիզմը յերկաթյա դիսցիպլինայի հետ աշխատանքի ժամին անառարկելի հնազանդությամբ, մեկ մարդու—խորհրդային ղեկավարի—կամքի հետ աշխատանքի ժամին» (Լենին)։

«Ձեռնարկության, ցեխի ադմինիստրացիան, ձեռնարկության մեջ արտադրական դիսցիպլինա մտցնելու ու ամրացնելու համար կիրառելով բոլոր անհրաժեշտ միջոցառումները, պետք է միաժամանակ կարողանա իր ամբողջ կազմակերպչական-վարչական գործունեության մեթոդները զուգորդել բանվորական մասսաների ստեղծագործական նախաձեռնության զարգացման անհրաժեշտության, նրանց արտադրության ղեկավարման մեջ ներգրավելու հետ, պարտադիր կերպով հաշվառելով նրանց առաջարկությունները և առաջարկությունների կենսագործմամբ ամեն կերպ քաջալերելով ռացիոնալիզատորական նախաձեռնությունը, բանվորական գյուտարարությունը և այլն, առավելագույն չափով զգայուն վերաբերմունք ցույց տալով բանվորների կարիքներին, մատնանշելով ինչպես տեխնիկական, նույնպես նաև կառավարման թերությունները»։ Մինչդեռ ինչպես կուսակցական աշխատողների, նույնպես և տնտեսավարների մեջ առաջ է գալիս այն սխալ հասկացողությունը, թե կամ լիակատար միջամտություն, կամ լիակատար կերպով գլխից ռադ անել, այսինքն՝ իբր թե բջիջը տնտեսության մեջ ոչ մի մասնակցություն ցույց չպիտի տա. սակայն Կենտկոմի որոշումը ճշտիվ սահմանում է իրավունքներն ու պարտականությունները։ Յուրաքանչյուր բջիջի քարտուղար, յուրաքանչյուր դիրեկտոր պետք է ճիշտ յուրացնեն այդ։

«Կուսբջիջները հատկապես ձեռնարկություններում, պետք է իրենց աշխատանքներով այնպես իրագործեն ձեռնարկության հասարակական-քաղաքական-տնտեսական կյանքի ղեկավարությունը, որպեսզի ապահովեն պրոֆմիութենական և տնտեսական օրգանների կողմից կուսակ-

ցության հիմնական դիրեկտիվների կատարումը՝ առանց միջամտելու գործարկոմի—դիրեկտորի աշխատանքի մանրամասնությունների մեջ, և մանավանդ ադմինիստրացիայի ոպերատիվ կարգադրությունների մեջ։ Կուսբյուրոները պետք է ակտիվորեն օժանդակեն արտադրության կառավարման ամբողջ սիստեմի մեջ միանձնյա ղեկավարության սկզբունքը իրագործելուն։ Կուսբյուրոները վոչ մի դեպքում չպետք է փոխարինեն ձեռնարկության ադմինիստրացիային՝ ստորին ադմինիստրացիայի նշանակման գործում, ավելի ևս անթույլատրելի յե բջիջի միջամտությունը ադմինիստրացիայի կարգադրությունների բանվորներին ցեխերում բաշխելու գործում։ Ձեռնարկության մեջ, դիրեկտորից ցած կանգնած հիմնական պաշտոնական անձնավորություններին (խոշոր ցեխերի վարիչները, և այլն) նշանակելու կամ փոփոխելու դեպքում, գործարկոմները քննում են այդ նշանակումները, փոփոխումները, և միայն այս կամ այն թեկնածվության համաձայն չլինելը չի կարող կասեցնել ադմինիստրացիայի կարգադրությունը, վիճելի հարցերը փոխադրելով համապատասխան կուսակցական, պրոֆեսիոնալ, տնտեսական օրգանները։

Բջիջները, նմանապես, չպետք է փոխարինեն գործարկոմին ու ադմինիստրացիային առանձին արտադրական կոնֆլիկտների լուծման համար բանվորությունից ստացվող գանգատների քննարկման գործում։ Ընդունելով բանվորների գանգատները, տեղեկանալով այդ գանգատների բովանդակությանը, հետևելով՝ վորպեսզի այդ գանգատները չարհամարհվեն, բջիջները պետք է միաժամանակ հնարավորություն տան համապատասխան մարմիններին ու կազմակերպություններին, վոր իրենք սպառեն այդ կոնֆլիկտների լուծման համար գոյություն ունեցող բոլոր հնարավորությունները։

Լսելով ձեռնարկության դիրեկտորի և խոշոր ցեխերի վարիչների զեկուցումներն արտադրության հիմնական հարցերի, ֆինպլանների կատարման հեռանկարների, կարևորագույն արտադրական առաջադրանքների, վերակառուցման ձեռնարկումների, աշխատանքային դիսցիպլինայի, աշխատանքի արտադրողականության և ձեռնարկության արտադրական կյանքի մյուս կարևոր կողմերի մասին, բջիջները չպետք է այդ առթիվ թույլ տան մանր քաշքշումներ տնտեսավարների նկատմամբ, պլանայնություն պահպանելով այդ հարցերի քննարկման գործում։ Չտարվելով ձեռնարկության կյանքի մանր հարցերով, բջիջները դրանով իսկ ավելի մեծ հնարավորություն կստանան իրագործելու մասսայական կազմակերպությունների քաղաքական ղեկավարության կարևորագույն խնդիրը, դաստիարակելով մասսաների մեջ դասակարգային զգոնություն և գիտակից վերաբերմունք սոցիալիստական ձեռնարկության շահերին»։



Հետո ընդգծվում է, վոր «կուսակցական, պրոֆմիութենական, ադմինիստրատիվ օրգանների միջև ֆունկցիաների բաժանման այդ հիմունքները վոչ միայն չեն ժխտում, այլ ընդհակառակն, յենթադրում են աշխատանքում սերտ կապ, փոխադարձ ոգնություն, իսկական ընկերական մթնոլորտի ստեղծում, վորը ժխտում է խնամիության, միմյանց փոխադարձաբար սքողելու հնարավորությունը»։

Այսպիսով, չսքողել միմյանց, խնամիություն չանել, միաժամանակ կամ բամբասանք առաջ չբերել, չարհամարհել միմյանց.—յուրաքանչյուրն իր տեղում և միաժամանակ բոլորը միասին։

Բջիջը, նրա բյուրոն ունեն իրենց ուղղակի պարտականությունները, վորոնց համար նրանք անմիջականորեն պատասխանատու յեն.—նրանք ղեկավարում են կուսակցական աշխատանքը, կիրառում են կուսակցության դիրեկտիվները։ Բջիջը հետևում է բոլորին։ Սակայն հետևել բոլորին, ղեկավարել բոլորին—դա չի նշանակում աշխատել բոլորի համար։ Այդ պետք է տարբերել։ Բջիջի բյուրոն պետք է ղեկավարի, պետք է թափանցի բոլոր անկյունները, իմանա այն բոլորը, ինչ կատարվում է գործարանում, սակայն նա չպետք է աշխատի բոլորի համար, նա չպետք է ամեն բան իր ձեռքում պահի։ Իսկ չէ՞ վոր դժբախտությունն այն է, վոր մի քանի բջիջներ ամեն բան իրենց ձեռքն են պահում, պարալելիզմ են առաջ բերում։

Կամ թե՝ վերցնենք աշխատավարձի հարցը։ Դա շատ բարդ հարց է, վորը մասնագիտացում է պահանջում։ Մեզանում առաջ են յեկել մասնագետ տարիֆիկատորներ, վորոնք տարիֆային ցանցն այնքան են բարդացրել, վոր վոչինչ չես հասկանա։ Այժմ գործը պետք է պարզեցնել, սակայն մարդկանց մասնագիտացնել հարկավոր է։ Յեթե գործարկոմը յուրաքանչյուր առանձին տարիֆային հարցով հարկադրված է վազել բջիջի բյուրոն, համաձայնեցնել, ապա, իհարկե, բջիջի քարտուղարը, բջիջի բյուրոն՝ ղեկավարելու համար ժամանակ չեն ունենա։

Այլ կերպ ասած բոլոր բնագավառներում կոնկրետ աշխատանքով չափազանց տարվելը, աշխատանքի բաժանման բացակայությունը և պարալելիզմն աշխատանքում վոչ միայն չի ուժեղացնում կուսակցական բջիջի ղեկավարությունը, այլ թուլացնում է նրան, վորովհետև մարդիկ հարկադրված են լինում զբաղվելու ինչով կուզեք, նրանք ժամանակ չեն ունենում ընդգրկելու ամբողջ գործը, առանձնացնել գլխավորը, կենտրոնանալ հիմնականի վրա։

Բջիջի բյուրոները, քարտուղարները վոչ մի դեպքում չպետք է կորցնեն ղեկավար դերը, այլ պետք է բարձր պահեն կուսակցական ղեկավարության դրոշը, պարալելիզմ թույլ չպետք է տան, չպետք է աշխատեն բոլորի համար, այլ պետք է ճիշտ դասավորեն ուժերն արտադրության մեջ։ Անհրաժեշտ է հասկանալ, վոր մեր գլխավոր լծակը—

մարդիկ—ո՛չ թե պարզապես կուսատոմս ունեցող մարդիկ են, այլ, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, բոլշևիկյան ոգի ունեցող մարդիկ: Պետք է գիտենալ ճիշտ դասավորել այդ բոլշևիկներին գործարանում: Անհրաժեշտ է կարողանալ շարժման մեջ դնել նրանց, այն ժամանակ կարող են հաջող լուծվել բջիջի առաջ կանգնած խնդիրները: Սակայն կոնկրետ մարդկանց ուսումնասիրման և այդ ուժերի դասավորման հատկացվում է, մեղմ արտահայտած անբավարար ուշադրություն, քան անվերջ նիստերին և ընդհանուր դատողություններին: Դա սերտորեն կապված է կուսմասսայական աշխատանքի բարելավման հարցի հետ: Ֆունկցիաների ճիշտ բաժանման դեպքում բջիջը հնարավորություն կստանա ավելի մեծ նախաձեռնություն, ակտիվություն և ճկունություն հայտաբերել:

Ներկա մոմենտում բջիջը պետք է գլխավոր շեշտը դնի կուսմասսայական աշխատանքի վրա: Դրանով իսկ կապահովվի արդֆինպլանի կատարումը: Դրա համար անհրաժեշտ է վերակառուցել բջիջի աշխատանքը:

## ԲԱՐԵԼԱՎԵԼ ԲՋԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԻՍՏԵՄՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Այժմ, ավելի քան յերբևիցե, մենք պետք է բոլոր գծերով—կուսակցական, պրոֆմիութենական, արտադրական—ամբողջ աշխատանքը փոխադրենք ցեխը: Յես գտնում եմ, որ այժմ կազմակերպչական-կուսակցական աշխատանքի գործը մեզ մոտ ձեռնարկություններում, մանավանդ խոշոր գործարաններում, վատ է: Իսկ չէ՞ որ, ընկերներ, կազմակերպչական հարցն է վճռում գործը: Կան քաղաքական աշխատողներ, որոնք մտածում են «քանի որ յես արդեն քաղաքագետ եմ, իմ ինչ գործն է զբաղվել կազմակերպչական հարցով»: Դա, ընկերներ, դատարկ բան է: Հենց Լենինն ու Ստալինը մեզ սովորեցրել են, որ չպետք է լինի այնպիսի բոլշևիկյան քաղաքագետ, որը չզբաղվի կազմակերպչական հարցերով:

Մենք պետք է այժմ դնենք ցեխային բջիջների հարցը: «Դինամո» գործարանում, օրինակի համար, կա 60 ցեխային և հերթափոխային բջիջ: Ի՞նչ կստացվի, յեթե այդ բոլորը քննենք գործարանի կազմակերպչական-ստրուկտուրային տեսակետից, յեթե նրանում կա 50—60 բջիջ: Պարզ է, որ նա յերբեք չի կարող իսկապես ղեկավարել:

Ավելին, ցեխային այդօրինակ աննորմալ առատությունը վատ կազդի գործի տնտեսական կողմի վրա: Դիրեկտորն ի՞նչպես կկարողանա ղեկավարել գործարանը, յերբ այդ գործարանում 27 ցեխ կա: Նա չի կարողանա նույնիսկ ընդունելու ցեխերի բոլոր պետերին, կուսկոմիտեյի քարտուղարն էլ չի ճանաչի իր բոլոր քարտուղարներին:

Ո՞ւր է լինում կուսակցական կոմիտեյի քարտուղարը: Նույնիսկ մարդիկ



1008
34711

կարծում են, որ կուսկոմիտեյի քարտուղարը նստած է գործարանում: Ո՛չ: Դա սխալ պատկերացում է: Ահա թե ինձ հետ զրուցելու ժամանակ ինչ ասաց ցեխբջիջի քարտուղարներից մեկը.—«ամսվա առաջին կեսում մեզ ցեխերում չեք տեսնի, կուսկոմիտեյից ու ադմինիստրացիայից ոչ ոք չկա, դրա փոխարեն ամսվա վերջում հանկարծ հայտնվում են կուսկոմիտեյի քարտուղարը, գործարկոմի նախագահը, դիրեկտորը»: Կուսկոմիտեյի քարտուղարն իր ժամանակի կեսը, յեթե ոչ ավելին, անց է կացնում ադմինիստրատիվ զբաղմունքներով: Իսկ չէ՞ որ նա պետք է լինի ցեխերում, տեղյակ լինի կադրերին և այլն:

Չի կարելի կարծել, որ կուսմասսայական աշխատանքը կարելի յե ղեկավարել վերից՝ առանց ամուր միջուկի միջին օղակներում. գործը վճռում է միջին օղակը: Մեզ մոտ ձեռնարկություններում այսպես է դրությունը.—վերևում նստում են քարտուղարը, կազմբաժվարը, ագիտբաժվարը, և մի զույգ հրահանգիչ (գործարանում հրահանգիչներ են առաջ յեկել), իսկ ներքևում—ցեխային բջիջներ, որոնք ունեն ազնիվ, նվիրված, սակայն ոչ բավարար չափով փորձառու քարտուղարներ:

Այսպիսի դրության դեպքում, իհարկե, կուսկոմիտեն չի կարող ապահովել կուսաշխատանքի ղեկավարությունը ցեխում, հերթափոխության մեջ:

Յեվ զարմանալի չէ, որ, օրինակի համար, «Դինամո» գործարանում, շտամպի ցեխում կազմակերպվեց «օրինակելի» կուսխմբակ, որին կուսկոմիտեյում ու գործարանային թերթում գովեցին որպես ամենալավագույնի, սակայն, ինչպես հետո, ստուգման ժամանակ պարզվեց, այդ «կուսխմբակը» իր կազմով անկուսակցական եր և ավելին, նա գլխավորված եր ինչ որ Թադևոսյանի կողմից, որը մտածում եր ապագայում... կուսակցության մեջ մտնել (ծիծաղ): Դա կարող եր պատահել միայն այն պատճառով, որ կուսկոմիտեյի աշխատողները նստել եյին վերևում, ցեխերից բարձր, և չեյին ճանաչում կուսխմբակներին: Առավել ևս ցեխերում մարդիկ ամուր չեն, փորձ չունեն:

Դա տեղի յե ունենում միայն նրա համար, որ մեղանում դեռևս թույլ է կուսակցական կազմակերպիչների և ղեկավարների միջին օղակը, որոնք չեն ընդգրկում ներքևում գոյություն ունեցող ցեխային, հերթափոխային և օղակային բազմաթիվ բջիջները: Յես կարծում եմ, որ այդպիսի դրությունն անհրաժեշտ է լիկվիդացիայի յենթարկել: Անհրաժեշտ է յուրաքանչյուր գործարանում ստեղծել որոշ քանակությամբ կայուն ցեխային կամ կորպուսային կուսբջիջներ, նրանց գլուխ կանգնեցնելով կայուն կուսաշխատողներ: Դա չի բացասում հերթափոխային, խմբակային և այլ ստորին բջիջների գոյությունը:

Վերցնենք նույն «Դինամո» գործարանը, որի կուսկազմակերպու-

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

թյունը 1500 կոմունիստ ունի։ Այդ գործարանում ստեղծված է 60 ցեխային բջիջ, իսկ կուսակցական կազմակերպությունների միավորների—ցեխային, հերթափոխային, ողակային, կուսխմբակային—թիվն այդ գործարանում հասնում է 170-ի։ Ամբողջ գործարանում 1500 կոմունիստ կա, ցեխային բջիջներում 15—20 կուսակցական։ Ստացվել է գործարանի կոմունիստական ուժերի աննպատակահարմար փոշիացում, կոտրատում։ Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի բջիջներ, վորոնք լինեն ամուր, զորեղ, բջիջներ և բառիս բովանդակ իմաստով ղեկավարող ուժ լինեն ցեխերում։

Ինքնին հասկանալի յե, վոր մեր կուսկոմիտեները և մասնավորապես այստեղ հաշվետվություն ներկայացնողները խոշոր նվաճումներ են արել։ Որինակի համար՝ նույն «Դինամո» գործարանը։ Առաջ, ինչպես ձեզ հայտնի յե, արդֆինպլանի կատարման տեսակետից նա Մոսկվայի կազմակերպության խայտառակ բիծն եր, իսկ այժմ արդֆինպլանի կատարման 101—102 տոկոսն է տալիս։ Գործարանը թերություններ ուներ ինքնաքննադատության գծով։ Իսկ այժմ Մոսկվայի Կոմիտեյի, Մոսկվայի քաղաքային Կոմիտեյի և շրջկոմի մամուլի ներգործությամբ կուսկոմիտեն ու կազմակերպությունն ուղղել են այդ թերությունների մեծ մասը։ Գործարանն ունի բոլոր հնարավորություններն ավելի առաջ ընթանալու համար։ Սակայն այդ գործում կոչված են մեծ դեր կատարելու կուսակցական կազմակերպությունն ու կազմակերպչական-կուսակցական աշխատանքի ճիշտ դրվածքը։

«Դինամոյի» կուսմասսայական աշխատանքը բավարար չէ։

Անհրաժեշտ է գործարանային կուսակցական կոմիտեների մեծ մասի ապարատները վերակառուցել, այնտեղ չթողնելով կազմբաժինները, ագիտ-մասսբաժիններին և կուլտպրոպներին։ Նրանց բոլորին պետք է ուղարկել ցեխերը, վճռական-միջին ողակները, կուսկոմիտեյում թողնելով միայն քարտուղարին՝ տալով նրան մի ոգնական (ծիծաղ)։ Կուսակցական կոմիտեյի քարտուղարն իր ժամանակի 90 տոկոսը պետք է անցկացնի ցեխում, բանվորության մեջ։ Նրան տալ փոքրիկ սենյակ և փոքրիկ սեղան, այնպես, վոր յերբ նա գրի, նրա ձեռները կախվեն, այն ժամանակ նա բանաձևեր քիչ կգրի (ծիծաղ, ծափահարություն)։ Մեր գործարանային կուսակցական կոմիտեները նախորոք պատրաստում են բանաձևեր, անպայման մեծ, իսկ ժողովներին նստում են յերկար, բոլոր հարցերը քննում են «հանգամանորեն» արտասանելով յերկար ճառեր և ընդունելով մեծ բանաձևեր։

Իհարկե, միմիայն արձանագրություններով չի կարելի դատել աշխատանքի մասին, նրանք միայն ոժանդակ մատերիալ են, (պետք է դատել կյանքի պրակտիկայի կոնկրետ արդյունքներով), սակայն արձանագրությունն այնուամենայնիվ իլյուստրացիա յե։ Վորպես այդպիսի



իլյուստրացիա բերում եմ «Դինամո» գործարանի կուսկոմիտեյի մի արձանագրություն։ Այդ արձանագրությունը պարունակում է 5 մեծ բանաձևեր։ Ըստ վորում գործը հասել է նրան, վոր արձանագրության մեջ գրում են.—

Լսեցին.—

«Կուսաշխատանքի ստուգատեսի ընթացքի մասին».

Վորոշեցին.—

«Նայիր № 2 բանաձևին» (ծիծաղ), ցեխի մատերիալը (վորոշման հիմնական մատերիալը) տալ յերեք բջիջներին. ստուգատեսի մասին յեղած վորոշումը հրապարակել «Մոտորում»։

Եվ ինչու համար են կուսմասսայական աշխատանքի այդ հատուկ ստուգատեսները, յերբ բավական է հարցնել բանվորներին «կարդացե՞լ եք թերթը թե՞ վոչ» (ծիծաղ)։ Ահա լավագույն ստուգատեսը։ Կգնաք ցեխ ու կհարցնեք—«թերթ կարդացե՞լ ես»։ «Վոչ, չեմ կարդացել»։ Ձեր ստուգատեսը վերջացած է։ Բուռն ծափահարություններ, ծիծաղ)։ Եվ հարկավոր չէ «արվեստի բոլոր որենքներով» կատարված մեր ստուգատեսը՝ մեծ թղթե բանաձևերով։

Հետո արձանագրության մեջ դուք կկարդաք.—

Լսեցին.—

«Կուսակցական անդամավճարների ստուգիչ թվերի մասին» (ծիծաղ)։

Վորոշեցին.—

«Ցեխ բջիջներից տեղեկություն չունենալու համար հարցն որակարգից հանել» (ծիծաղ)։

Լավ կլիներ պարզապես գնալ ցեխ, ստուգել մի քանի տասնյակ կուստոմսեր և պարզել, թե ով չի վճարում անդամավճարները։ Դա շատ ավելի լավ կլիներ, քան քննարկման դնել ու հանել կուսակցական ֆինանսների թվերը (ծիծաղ, ծափահարություն—ստուգիչ թվերը (ծիծաղ, ծափահարություններ)։

Կամ թե մի ուրիշ որինակ.—

Լսեցին.—

«Մոտոր»-ում տեղավորված հոդվածիկների ներգործության մասին։

Վորոշեցին.—

Հոդվածների ներգործության մասին իր ժամանակին բանաձև չներկայացնելու համար զեկուցումը հանել որակարգից։

Դա ինչպիսի ներգործություն է, յեթե կարևոր հարցը հանվում է որակարգից միայն նրա համար, վոր նախորոք բանաձև չի պատրաստված։ Նույն արձանագրության մեջ գրված է.—

Լսեցին.—

Ջուլֆան ցեխում խոտանի դեմ պայքարելու համար կուսկոմիտեյի վորոշումների ստուգման մասին։

Վորոշեցին.—

Ջուլֆան ցեխում խոտանի դեմ պայքարելու համար կուսկոմիտեյի վորոշումների կատարման ստուգման հարցը հանել օրկարգից՝ զեկուցման առթիվ բանաձև չներկայացնելու պատճառով։

Այսպիսի փաստերը, վորոնք ցույց են տալիս, թե մի քանի գործարաններում սխալ մոտեցում կա դեպի գործարանային բջիջի կուսաշխատանքը, միանգամայն անթույլատրելի յեն. դրան պետք է վերջ տրվի, վտարելով այդ կուսակցական պրակտիկայից։

Բանաձևեր գրելը պետք է մինիմումի հասցվի, և այժմյան 20 բանաձևերից թողնել միայն մեկը, (ծիծաղ, ծափահարություններ)։ Կուսակցական կոմիտեները, պետք է թղթե ղեկավարության մեթոդները դեն շպրտելով՝ նստեն ցեխերում։ Պետք է կուսբջիջի և կուսկոմիտեյի հիմնական ուժերը կենտրոնացնել ցեխերում, կուսխմբակներում։ Դրա համար անհրաժեշտ է փոփոխել կուսկազմակերպության կազմակերպչական ստրուկտուրան ձեռնարկություններում։

Ամենից առաջ հարկավոր է, ընդհանուր գործարանային կուսակցական ապարատի նվազեցման հաշվին ամրացնել ձեռնարկության միջին օղակը, տեղափոխելով այնտեղ փորձառու կուսակցականներին, վորոնք կարողանան ղեկավարել ստորին օղակը ցեխում։ Պետք է ստեղծել կուսակցական կայուն ստորին ակտիվ։

Ուրեմն, կուսակցական կազմակերպությունների հիմնական խնդիրն է՝ այնպես վերակառուցել կուսակցական կազմակերպությունների աշխատանքն ու ստրուկտուրան, վորպեսզի նրանք ավելի մոտ լինեն ցեխին և իրենց ամբողջ ուժն ու ուշադրությունը կենտրոնացնեն հատկապես ցեխում։ Պետք է բոլշևիկորեն կազմակերպել ամբողջ կուսաշխատանքը, վորպեսզի գլխավոր ուշադրությունը դարձվի միջին օղակի և նրա կուսկազմակերպիչների վրա, վորպես կուսկոմիտեյի հիմնական օգնականների վրա, վորոնք ընդգրկում են բանվորական ամբողջ մասսան և կազմակերպում են նրան պայքարելու արդֆինպլանի, մատակարարման, կուլտուրայի, դպրոցի համար և այլն։ Անհրաժեշտ է կուսմասսայական աշխատանքը շաղկապել այն բոլոր ձեռնարկումների հետ, վորոնք կիրառվում են գործարանում, նմանապես նաև բոլշևիկյան ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման հետ։

Յերբ, դրա հետ սերտ կապակցությամբ, մենք խոսում ենք մասսայական բոլշևիկյան ինքնաքննադատության մասին, ապա մենք նկատի ունենք վոչ թե պարզապես այն, վոր հանդես կգա այս կամ այն մարդը և վորոշ վերապահումներով կխարազանի ինքն իրեն։ Մենք պետք է վճռա-



կանորեն յերևան հանենք հիվանդագին յերևույթներն ու ցավերը։

Ինքնաքննադատությունն ըստ եյության մենք հասկանում ենք բոլշևիկորեն, և վոչ թե մանր-բուրժուականորեն։ Դա չի նշանակում, վոր կես տարին մի անգամ, յերբ հայտնաբերվի վորևէ «աղմկալի» գործ, հանդես գալ ինքնաքննադատությամբ։ Դա նշանակում է, վոր յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր ժամ, յերևան հանելով բոլոր թերությունները, զգալ տալ ինքնաքննադատության հետագա զարգացումը։

Պետք է բարելավել Մոսկվայի քաղկոմի ու շրջկոմների կողմից բջիջներին ցույց տրված ղեկավարությունն ու օգնությունը։ Մենք պետք է ուղղակի ասենք, վոր Մոսկվայի քաղկոմի կողմից բջիջներին ցույց տրված ղեկավարությունը մեծ թերություններ ունի։ Մենք իրավունք չունենք հպարտանալու, մենք դեռ մեր ղեկավարությամբ, ինչպես հարկն է, չենք ընդգրկել կուսաշխատանքը գործարաններում։ Վո՛չ։ Մենք մի շարք հարցեր դրինք բյուրոյում, քարտուղարության մեջ և այն, վոր այժմ Մոսկվայի Կոմիտեյի պլենումում դրել ենք վոչ թե ընդհանուր զեկուցում կուսաշխատանքի մասին, այլ գործարանային կուսբջիջների հաշվետվությունները, ցույց է տալիս, վոր մենք գործին մոտենում ենք ընդհուպ։ Սակայն հարցը սրանով չի վերջանում։

Մեր խնդիրն այն է, վորպեսզի մենք օգտագործենք ուժերի այն հսկայական պաշարը, վոր մենք ունենք։ Սակայն մենք դեռ ամբողջը չենք օգտագործել։

Յեթե մենք լավ դնենք կուսակցական մասսաների դաստիարակության գործը, կուսբջիջների աշխատանքը կազմակերպենք նոր ձևով, նրան գործնականապես և քաղաքականապես իր արժանի բարձրության դնենք, ապա մեր ամբողջ կուսաշխատանքը տառացիորեն մի քանի անգամ վեր կբարձրացնենք։ Դրա համար ել ամենից առաջ կուսակցական բջիջների խնդիրն է՝ կիրառել և իրագործել մեր կուսակցության լոզունգները մասսաներում։

Դրա համար հարկավոր է կուսակցության անդամներին ու թեկնածուներին բոլշևիկորեն կռել ու դաստիարակել։ Յես մանրամասն կանգ չեմ առնի մարքս-լենինյան դաստիարակության հարցերի վրա, վորովհետև այդ հարցը վերջին ժամանակներս մանրամասնորեն մշակվում է. դա չի նշանակում թեորետիկ ուսումն անջատել քաղաքականությունից, անհրաժեշտ է բջիջի ժողովները և զեկուցումները ժողովներում ավելի սերտ կապել դասախոսությունների, ուսման հետ կուսդպրոցներում, խմբակներում և այլն։

Անհրաժեշտ է կոփել կուսակցության անդամին, թեկնածվին, վորովհետև դեռևս չի վերջացել դասակարգային թշնամու պայքարն ընդ-

դեմ կառուցվող սոցիալիզմի, վորը հաղթահարում է իր ճանապարհի բոլոր դժվարությունները։

Մեր կուսակցությունը գաղափարապես և քաղաքականապես բարձրացել է շատ բարձր աստիճանի։ Հսկայական պայքար է մղված տրոցկիստների, աջ ու «ձախ» թեքումների, աջ-«ձախ» բլոկի դեմ։ Վերջին յերկու տարվա ընթացքում կուսակցությունն իր շարքերից դուրս է շպրտել յերկերեսանիներին և օպորտունիստներին, դասակարգային թշնամու ագենտներին, նեխված ու այլասերված մարդկանց։ Սակայն միաժամանակ իր շարքերն է գրավել տասնյակ ու հարյուրավոր հազար առաջավոր, լավագույն բանվորներին և կոլտնտեսականներին, սոցիալիստական աշխատանքի հերոսներին, կոմունիզմի մարտիկներին։ Յեվ Մոսկվայի Կոմիտեյի, Մոսկվայի ամբողջ կազմակերպության խնդիրն է՝ ամբողջ աշխատանքն այնպես դնել, վորպեսզի Մոսկվա քաղաքում, Մոսկվայի մարզում չլինի և վոչ մի բայլշեվիկ, վորը յուրացրած չլինի մարքսիզմ-լենինիզմի հիմունքները, վորը չիմանա կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը, Կոմինտերնի ծրագիրը, վորն ամեն որ համառ ու ակտիվ պայքար չմղի թեքումների դեմ կուսակցության ներսում, թշնամական յելույթների դեմ կուսակցությունից դուրս, հանուն կուսակցության գլխավոր գծի վերջնական հաղթանակի, հանուն լենինիզմի լիակատար հաղթանակի։



## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ—ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԱԳԻՏԱՑԻՈՆ—ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ՅԵՐՔԱՂԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հ · Կ ·(բ) Յերքաղկոմի 3-րդ պլենումի վորոշումը՝ Յերքաղկոմի կազմ-բաժնի, Կոնսերվի գործարանի ու Տպարանի կոմբջիջների զեկուցումների առթիվ։

I

Հ · Կ ·(բ)Կ · Յերկոմի 3-րդ պլենումը, լսելով և քննարկելով Յերկոմի կազմբաժնի և Կոնսերվի գործարանի ու Տպարանի կոմբջիջների զեկուցումները՝ կազմակերպչական-կուսակցական, ագիտացիոն-մասսայական և դաստիարակչական աշխատանքների մասին, արձանագրում է, վոր Յերևանի կուսակցական կազմակերպությունը կուսակցության գլխավոր գծի անշեղ կենսագործման համար մղված պայքարում՝ Հայկոմկուսի Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ, բարձրացրել է իր շարքերի մարտունակությունը, աճել և ամրացրել է նրանց միաձուլությունը քանակապես ու վորակապես։ Միայն Կոնսերվի գործարանի և Տպարանի կուսկազմակերպությունները 1931 և 1932 տարիների ընթացքում աճել են 75 նոր հարվածային, լավագույն բանվորներով (Կոնսերվի գործարանում 55, իսկ Տպարանում 20)։ Յերևանի կազմակերպությունն աճել է 1238 նոր, սոցիալիզմի կառուցման մարտերում կոփված հարվածային մարտիկներով։ Նոր, յերիտասարդ կադրերի հաշվին, աճել է քաղաքի բանվորության թիվը։

Պլենումը նշում է, վոր չնայած կազմակերպչական-կուսակցական-մասսայական աշխատանքի վերակառուցման վորոշ նվաճումներին (ստրուկտուրային վերակառուցումը կազմակերպության բջիջներում հիմնականում ավարտված է), կուսմասսայական աշխատանքի ներկա վիճակը Յերևանում, դեռ չի բավարարում սոցիալիստական շինարարության ներկա ետապի պահանջներին։ Հատկապես անբավարար է կուսակցական ստորին ողակների, կուսխմբակների աշխատանքի բովանդակությունն և վորակը։

Չնայած խոշոր չափով աճել է կուսակցական-կազմակերպչական իդեական-քաղաքական ազդեցությունը բանվորական լայն մասսաների

վրա, սակայն կուսակցական մասսայական աշխատանքի հիմնական թերությունն այն է, վոր բոլոր բանվորները դեռ ևս գլխովին չեն ընդգրկված մեր քաղաքական ներգործության տակ, առանձնապես գործարան յեկած նոր բանվորները, վորոնց դաստիարակությունը, կուլտուրական-քաղաքական մակարդակի բարձրացումը պետք է դառնա մեր կարևորագույն և գլխավոր խնդիրներից մեկը:

## II

Պլենումն ընդգծում է, վոր Տպարանի և Կոնսերվի գործարանի կուսակցական կազմակերպությունների ձեռք բերած հաջողությունների կողքին (Տպարանի հնդամյակի կատարումը 3 տարում, Կոնսերվի գործարանի մոնտաժի հաջող ընթացքը և այլն), գոյություն ունեն աչքի ընկնող խոշոր բացեր, առանձնապես թույլ է կուսակցական-մասսայական աշխատանքը: Կուսակցական աշխատանքի ներկա վիճակը չի ապահովում Տպարանի և Կոնսերվի գործարանի հնդամյակի 4-րդ՝ ավարտական տարվա պլանների կատարումը:

Տպարանի կուսկազմակերպությունը մինչև վերջերս էլ կառուցված էր սխալ սկզբունքի վրա (միքանի ցեխերի կոմունիստներն ընդգրկված էյին մեկ ցեխ բջիջի մեջ), վորի հետևանքով բացակայում էր կուսակցական կոնկրետ ղեկավարությունը բոլոր ցեխերի արտադրական-քաղաքական կյանքում: Անբավարար է կուսակցական-մասսայական աշխատանքի ծանրության կենտրոնը՝ ցեխը, բրիգադը փոխադրելու ուղղությամբ տարված աշխատանքը:

Կոնսերվի գործարանի և Տպարանի կուսակցական կազմակերպությունները չեն կարողացել իրենց աշխատանքը վերակառուցել այնպես, վորպեսզի ապահովեն ամենօրյա կոնկրետ, օպերատիվ ղեկավարությունն ու ոգնությունը ցեխային բջիջներին ու կուսխմբակներին, նրանց իրենց ցեխի-բրիգադի քաղաքական-հասարակական կյանքի իրական ղեկավարը դարձնելու համար: Կոլբյուրոները հաճախ քննության առնելով ցեխ բջիջների իրավասության հարցերը դիմազրկել են նրանց:

Անբավարար է ամենօրյա կենդանի կապը յուրաքանչյուր բանվորի հետ հենց դազգյահի մոտ, նրանց պահանջները լսելու և բավարարելու, այրող հարցերին պատասխանելու, կոնկրետ կարիքներին ծանոթանալու և այդ կարիքներին բավարարելու համար:

Կոնսերվի գործարանում և Տպարանում կուսկոլբյուրոները և ցեխային բջիջները դեռևս յերեսով չեն դարձել դեպի կենդանի կոմունիստը և կենդանի բանվորը: Կենդանի կոմունիստն անծանոթ է կոմբջիջի բյուրոյին և քարտուղարին: Անբավարար է աշխատանքը կուսթեկնածուների հետ (Կոնսերվի գործարանում 1931 թվին ընդունված 46 թեկնածուներից



միայն 19-ն են փոխադրվել անդամ): Անբավարար է կոմունիստների և անկուս. բանվորների Մարքս-լենինյան դաստիարակությունը (Կոնսերվի գործարանում կոմունիստների 48,6%-ն է ընդգրկված քաղուսուցման ցանցում, իսկ Տպարանում բյուրոկրատիկ, անփույթ վերաբերմունք են ցուցաբերել դեպի քաղ. ուսուցումը): Անբավարար է քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կոմյերիտմիության բջիջներում և կուսակցական գործնական ղեկավարությունը նրանց նկատմամբ:

Պլենումը վերոհիշյալ բացերը վերացնելու համար առաջարկում է Կոնսերվի գործարանի և Տպարանի կոմբջիջներին՝ Յերկոմի բյուրոյի վերջին վորոշումների հիման վրա վճռական միջոցառումներով ապահովել նշված բացերի վերացումը և այդ մասին 1932 թ. սեպտեմբերի 17-ին զեկուցել Յերկոմի բյուրոյին:

## III

Յերքաղկազմակերպության կոմբջիջների աշխատանքն էլ ավելի բարձր աստիճանի հասցնելու համար, պլենումը վորոշում է.

1. Հավանություն տալ Յերկոմի բյուրոյի մայիսի 28-ի կոնկրետ միջոցառումներին կազմակերպչական-կուսակցական և մասսայական ու դաստիարակչական աշխատանքների բարելավման վերաբերյալ:

2. Բանվորական լայն զանգվածներին կուսակցության լոզունգների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու, ընկ. Ստալինի 6 ցուցմունքները լիովին կենսագործելու և հնգամյակի 4-րդ ավարտական տարվա պլանային նախատեսումներն իրագործելու համար, Յերևանի կուսկազմակերպության բոլոր բջիջները, կուսխմբակները և կուսկազմակերպիչները պետք է իրենց աշխատանքի կենտրոնում դնեն կուսակցական-մասսայական աշխատանքի ծավալումը:

3. Յերկոմի բյուրոյին և կազմակերպության բոլոր բջիջներին՝ շտապ կարգով ստուգել ձեռնարկություններում կուսակցական ղեկավարության դրվածքը. յերեվան հանել տնտեսական ղեկավարության փոխարինման և միանձնյա ղեկավարության խախտումների կոնկրետ արտահայտությունները և վճռական միջոցառումներով ուղղել կատարված սխալները: Համկոմկուսի Կենտկոմի 1929 թվի սեպտեմբերի 5-ի, Նիժնիյ-Նովգորոդի Ավտոգործարանի, Մոսկվայի «Շարիկոպոդշիպնիկ» գործարանի մասին վորոշումները և Յերևանի Մեխգործարանի դասերը պետք է հիմք ծառայեն միանձնյա ղեկավարությունն ուժեղացնելու և կուսակցական ղեկավարությունն ամրացնելու այնպես, վոր առանց փոխարինելու տնտեսավարին և գործարկոմին, կուսկազմակերպությունները «մտնեն տնտեսական հարցերին ամենից առաջ կուսակցական տեսանկյունից» («Բոլշևիկ» № 5—6):

4. Յերկոմի կազմ-հրահանգչական բաժնին՝ ուսումնասիրել կոլ-

բյուրոները և ցեխային բջիջները վերացնելու վերաբերյալ Տպարանի և Մեխգործարանի փորձը՝ և դրական արդյունքներ տալու դեպքում՝ վերացնել նաև մյուս կոլբյուրոները: Երևանում ներկա էտապում առավելություն տալ կուսխմբակին և գործարանային բջիջին: Շարունակել կազմակերպության բջիջների ստրուկտուրային վերակառուցման ուսումնասիրությունը, կատարված սխալները վերացնելու և բջիջների կառուցվածքն ավելի ճշտելու համար:

5. Հավանություն տալ Երկոմի բյուրոյի միջոցառումներին, կուսակցական ակտիվի ուսումնասիրության, ընտրության, պատրաստման, վերապատրաստման, բաշխման և նպատակահարմար օգտագործման ուղղությամբ: Պլենումն առաջարկում է քաղկազմակերպության բոլոր բջիջներին՝ այդ ուղղությամբ մշակել գործնական միջոցառումներ (կարճատև դասընթացներ, սեմինարիաներ, հրահանգչական խորհրդակցություններ և այլն):

6. Կուսխմբակների և կուսկազմակերպիչների աշխատանքի բովանդակության և վորակի հետագա բարելավումը հանդիսանում է քաղկազմակերպության բոլոր կոմբջիջների հիմնական խնդիրը: Այդ տեսակետից անհրաժեշտ է ամենօրյա գործնական օգնություն ցույց տալ կուսխմբակներին հենց ցեխում, բրիգադում:

Պլենումն առաջարկում է քաղկազմակերպության բոլոր բջիջներին՝ կուսխմբակների աշխատանքի պրակտիկայից հիմնովին վերացնել—կուսխմբակների նիստերն արտադրական խորհրդակցության նիստերի վերածելը. կուսխմբակը և կուսկազմակերպիչը պետք աջակցեն ցեխի վարիչին և բրիգադիրին կիրառելու միանձնյա ղեկավարության սկզբունքները և գործնական, ոպերատիվ ղեկավարություն ցուցաբերեն պրոֆ. ու ԼԿԵՄ կազմակերպիչներին:

7. Պլենումն առաջարկում է բոլոր կոմբջիջներին՝ օգնել կուսխմբակներին և կուսկազմակերպիչներին կազմել իրենց աշխատանքի ծրագրերը: Աշխծրագրերի հիմքում դնել կուսակցական-կազմակերպչական աշխատանքը, անհատական և խմբակային ագիտացիայի կազմակերպումը, մասսաների տրամադրությունների, կարիքների և պահանջների հաշվառումը, նրանց հարցումների պատասխանների կազմակերպումը և այլն: Երկոմի բյուրոյին՝ կուսխմբակների աշխծրագրերը կազմելու համար, բացի կցված ընկերներից, քաղկազմակերպության ակտիվից մոբիլիզացիայի յենթարկել 100 հոգի:

8. Կուսակցական յուրաքանչյուր անդամին և հատկապես թեկնածուին, վորպես կենդանի մարդ ճանաչելու, ուսումնասիրելու, կուսակցական գործնական աշխատանքներում ընդգրկելու, ավանգարդային դերն արտադրության մեջ բարձրացնելու տեսակետից, առաջարկել



բոլոր կոմբջիջներին, ցեխ-բջիջներին, նրանց բյուրոներին և կուսկազմակերպիչներին՝ անմիջապես, Կարբիտի գործարանի բջիջի օրինակով սկսել կոմունիստների ավանգարդային դերի ստուգատեսը:

9. Երկոմի կազմ-հրահանգչական բաժնին և բոլոր կոմբջիջներին ու կուսխմբակներին՝ մինչև հուլիսի 1-ը վերաբաշխել կուսպարտականությունները բոլոր կոմունիստների միջև,—յուրաքանչյուրին տալով կուսակցական կոնկրետ պարտականություն, գործադրելով չարքային կոմունիստների և թեկնածուների հաշվետվությունների մեթոդը կուսխմբակներում, բյուրոներում և բջիջների ժողովներում իրենց կատարած արտադրական-հասարակական և քաղաքական աշխատանքների մասին:

10. Պլենումը հանձնարարում է քաղկազմակերպության բոլոր բջիջներին՝ կուսպարտականությունները կուսխմբակներում բաշխելիս, նախ և առաջ ապահովել ստորին յեռանկյունու կազմակերպումը ցեխում, բրիգադում: Կուսխմբակում յուրաքանչյուր կոմունիստին դարձնել աշխատանքի կոնկրետ բնագավառի կազմակերպիչ (կուսաճման կազմակերպիչ, ագիտատոր, պրոպագանդիստ, սոցմրցման կազմակերպիչ, ինֆորմատոր և այլն): Հանձնարարել Երկոմի բյուրոյին մշակել հրահանգ կուսպարտականությունները կոմունիստների մեջ բաշխելու վերաբերյալ:

11. Պլենումը հավանություն է տալիս Երկոմի բյուրոյի հունիսի 9-ի վորոշումներին՝ «Կուսթեկնածուների մարքս-լենինյան դաստիարակության խնդիրների և նրանց կուսակցական գործնական աշխատանքի մեջ ներգրավելու կոնկրետ միջոցառումների մասին» և առաջարկում է բոլոր բջիջներին անշեղորեն կյանքում կիրառել այդպիսիք:

12. Կուսակցական-մասսայական և դաստիարակչական աշխատանքների բարելավման գործում կուսակցական միասնական օրվա ճիշտ կազմակերպումը բացառիկ կարևոր նշանակություն ունի: «Ճիշտ, լուրջ պատրաստված և անցկացված կուսակցական օրը կնպաստի է՛լ ավելի բարձրացնելու կուսակցական բջիջների գաղափարական քաղաքական կյանքի մակարդակը, վորը և հանդիսանում է յերիտասարդ կուսակցականների մարքս-լենինյան դաստիարակության մեթոդներից մեկը («Բոլշևիկ»):

ա) Երկոմի պլենումն առաջարկում է Երկոմի բյուրոյին և բոլոր կոմբջիջներին՝ խստիվ պահպանել կուսակցական միասնական օրերը, թույլ չտալով այդ օրերի փոփոխումը: Կուսխմբակների նիստերի համար սահմանված օրերը ամբողջապես ամրացնել կուսխմբակներին.

բ) իբրև կանոն, ժողովների օրակարգի հարցերը վորոշել անվազն 5 օր առաջ և ժողովների նախապատրաստման գծով ծավալել մասսայական աշխատանք (մասսայականացնել օրակարգի հարցերը, հայտ-

նել ժողովի օրը, ժամանակը և տեղը, լուսաբանել օրակարգի հարցերը պատի թերթում, ցույց տալ օրակարգի հարցին վերաբերող կուսակցական վորոշումների և գրականության աղբյուրները, բաժանել ժողովի վորոշման նախագիծը ակտիվին, հրավիրել կուսկազմակերպիչների խորհրդակցություն, կազմակերպել կոնսուլտացիա օրակարգի հարցերի շուրջը, կազմակերպել առաջադրությունների համար, ցուցակագրել մարդերի փոխանակության մասնակցողներին և այլն).

գ) կոմբջիջների ընդրաց ժողովներին լայն չափով մասնակից դարձնել անկուսակցական բանվորներին և ծառայողներին: Յերկոմի պլենումն անթույլատրելի յե համարում բջիջների ընդփակ ժողովները ընդրաց ժողովներով փոխարինելը, ինչպես նաև բանվորների ընդհանուր ժողովները բջիջի ընդրաց ժողովների վերածելը: Բջիջները պետք է վճռականորեն պայքարեն ժողովները ձգձգելու և ուշ սկսելու յերևույթների դեմ, սահմանափակելով թե զեկուցողների և թե արտահայտվողների ժամանակը.

դ) առաջարկել Յերկոմի բաժիններին և բոլոր կոմբջիջներին՝ լուրջ ուշադրություն դարձնել զեկուցողների ընտրության վրա: Կոմբջիջների ժողովներն անցկացնելու համար կազմակերպության ղեկավար ակտիվին կցել կոմբջիջներին: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել զեկուցողների նոր կադրեր պատրաստելու վրա, հատկապես ագիտկոլեկտիվներից և պրոպագանդիստներից: Շարունակել զեկուցողների համար հրահանգչական զեկուցումներ կազմակերպելու և կուս-օրվա վերջում, օրվա արդյունքները ամփոփելու համար՝ զեկուցողների ու կցված ընկերների խորհրդակցություններ հրավիրելու պրակտիկան.

յե) հատուկ ուշադրություն դարձնել բջիջների ժողովների վորոշումների վորակի վրա, խուսափելով ընդհանուր, վոչինչ չասող բանաձևերից: Վորոշումները պետք է լինեն կոնկրետ, իրենց հիմքում ունենալով տվյալ հիմնարկ-ձեռնարկի առանձնահատուկ պայմանները: Բջիջի ժողովների վորոշումների կատարման վրա սահմանել մասսայական հսկողություն, աշխուժացնելով բջիջների կատարման ստուգման սեկտորների աշխատանքները.

զ) հանձնարարել Յերկոմի կազմ-հրահանգչական բաժնին՝ բջիջների հետ միասին պարզել կոմունիստների և անկուս. բանվոր ծառայողների մի մասի ժողովներին չմասնակցելու պատճառները և նրանց կազմը:

13. Պլենումն առաջարկում է Յերկոմի կուլտ-պրոպ բաժնին և կազմակերպության բոլոր բջիջներին՝ պայքարելով ամառային արձակուրդային տրամադրությունների դեմ, բոլոր կոմունիստներին, մանավանդ թեկնածուներին, գլխովին ընդգրկել կուսուսուցման ցանցում: Պլենումն առաջարկում է լուրջ ուշադրություն դարձնել պրո-



պագանդիստների վորակի վրա և կազմակերպել նրանց վերապատրաստման ու մեթոդական ցուցմունքներ տալու գործը: Նշելով քաղդպրոցների պարապմունքների հաճախակի վիժումը լսողների և պրոպագանդիստների բացակայության պատճառով,—պլենումն առաջարկում է Յերկոմի կուլտ-պրոպին և կոմբջիջներին՝ վճռական պայքար մղել նման յերևույթների դեմ, դիտելով այդ հանգամանքն իբրև ոպորտունիզմ գործնականում:

14. Հանձնարարել կուլտ-պրոպին՝ ուսումնասիրել Յերևանի ձեռնարկներում և շինարարություններում թեկնածուական դպրոցների փոքրացման և լայնացման հնարավորությունն, իսկ հերթափոխությամբ աշխատող գործարաններում կազմակերպել հերթափոխային դպրոցներ և խմբակներ:

15. Առաջարկել Յերկոմի կուլտ-պրոպին և Տպարանի կոմբջիջին՝ արագացնել թեորետիկ կոնֆերանսներ կազմակերպելու ուղղությամբ սկսած աշխատանքները և վոչ ուշ՝ քան հուլիսի 1-ին, հրավիրել առաջին կոնֆերանսը կուսպատմության ուսումնասիրության գծով: Յերկոմի կուլտ-պրոպին և քաղկազմակերպության բոլոր բջիջներին՝ Տպարանի բջիջի փորձի հիման վրա ձեռնարկել թեորետիկ կոնֆերանսներ հրավիրելու աշխատանքներին:

16. Մասսայական-ագիտացիան իդեական-քաղաքական ավելի բարձր աստիճանի հասցնելու նպատակով, պլենումն առաջարկում է՝ Յերկոմի բյուրոյին և քաղաքի բոլոր կոմբջիջներին՝ կազմակերպել բանվորների հարցումների պատասխանների գործը:

17. Մասսայական ագիտացիայի հաջող կազմակերպման համար վոչ ուշ, քան հոկտեմբերի 1-ը, Յերևանի բոլոր ձեռնարկություններում կազմակերպել ագիտ-կոլեկտիվներ կամ խմբակային ու անհատական ագիտատորների ինստիտուտներ:

Առանձնապես ուշադրություն դարձնել մասսայական միտինգների, բանվորների խմբերի և առանձին բանվորների հետ զրույցներ կազմակերպելու և թերթերի ընթերցման ձևերի վրա:

18. Առաջարկել Յերկոմի կուլտ-պրոպին և քաղկազմակերպության արտադրական բջիջներին՝ մինչև հուլիսի մեկը կազմակերպել ցեխային, բրիգադային և հերթափոխային պատի լրագրեր:

19. Պլենումը հանձնարարում է Յերկոմի բյուրոյին և քաղկազմակերպության բջիջներին՝ հատուկ քննության առնել բջջային սեկտորների աշխատանքների ներկա վիճակը և մշակել կոնկրետ մի շարք միջոցառումներ նրանց աշխատանքների աշխուժացման և խորացման համար:

Պլենումն անհրաժեշտ է համարում վերանայել բջիջներում սեկտորներ կազմակերպելու վերաբերյալ հրահանգը, փոքր բջիջներում սեկտորները վերացնելու իմաստով:

20․ Առաջարկել ԼԿՅԵՄ քաղկոմին և ՀԱՄԽ-ի ֆրակցիային՝ մինչև հունիսի 28-ը, ներկայացնել Յերկոմի բյուրոյին կոնկրետ ձեռնարկումներ—կուսակցական-մասսայական աշխատանքների ուժեղացման կապակցությամբ-պրոֆեսիոնալ և կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքների վերակառուցման և բարելավման ուղղությամբ:

21․ Կոմբջիջներին՝ ուժեղացնել իրենց ամենօրյա, կոնկրետ, օպերատիվ ղեկավարությունը գործարկոմ-տեղկոմների և ԼԿՅԵՄ բջիջների աշխատանքների վրա: Կազմ-բաժնին՝ մշակել կոնկրետ ձեռնարկումներ և ներկայացնել Յերկոմի բյուրոյին ի հաստատություն՝ պրոֆեսիոնալ և կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքների նկատմամբ կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու ուղղությամբ:

22․ Առաջարկել կազմակերպության բոլոր բջիջներին՝ Տպարանի կոմբջիջի օրինակով մինչև հուլիսի մեկը՝ մշակել կոնկրետ միջոցառումներ իրենց յենթաշեֆ գյուղերի կոմբջիջներին կազմկուս և մասսայական աշխատանքներում գործնական օգնություն ցույց տալու համար:

23․ Կազմակերպչական-կուսակցական և մասսայական աշխատանքների ուժեղացման կարևոր գործոններից մեկը հանդիսանում է կազմհրահանգչական աշխատանքը և ամենօրյա ինֆորմացիայի ամրացումը բջիջներում և Յերևանի Կոմիտեյում: Յերկոմի բյուրոյին՝ ինֆորմացիայի և հաշվառման ու բջիջների նկատմամբ կազմհրահանգչական աշխատանքների ուժեղացման ուղղությամբ ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ, վորով ստեղծել լայն հնարավորություն կուսակցական-քաղաքական ինֆորմացիան, քաղաքական տրամադրությունները-կուսխմբակից մինչև Յերկոմը հասցնելու գործը կազմակերպելու համար:

24․ Աշխատանքի դրական փորձի փոխանակման նպատակով ուժեղացնել կապը Թիֆլիսի 26-ի անվան ռայկոմի, Բաքվի Վորոշիլովսկի ռայկոմի և Լենինականի քաղկոմի հետ, հրավիրել միացյալ կոնֆերանսներ, հավաքներ և խորհրդակցություններ, ինչպես նաև բարելավել կապի մյուս բոլոր ձևերը (արձանագրությունների փոխանակում, նամակագրություններ, ներկայացուցիչների և ինֆորմ-տեղեկագրերի ուղարկում և այլն):

Առաջարկել բոլոր կոմբջիջներին՝ կազմակերպել փորձի փոխանակումը ձեռնարկության ներսում և մյուս բջիջների ու կուսխմբակների միջև: Հանձնարարել Յերկոմի կազմ-բաժնին՝ կազմել այս աշխատանքների կոնկրետ պլան:

25․ Կուսակցական-մասսայական աշխատանքի հաջող կազմակերպումը խոշոր խթան կհանդիսանա կուսկազմակերպության առողջ և նոր-



մալ աճման համար է՝ հաշիվ լավագույն հարվածային բանվորների: Սակայն պլենումը նախազգուշացնում է բոլոր բջիջներին, վոր կուսաճումը պետք է տարվի խիստ կազմակերպված, ռեզերվ ջոկելու, ուսումնասիրելու և պատրաստելու միջոցով,—վճռական պայքար մղելով օպորտունիստական ինքնահոսի վրա հույս դնելու գործելակերպի դեմ:

---

Բարձրացնելով կազմակերպչական-կուսակցական, ագիտացիոն-մասսայական և դաստիարակչական աշխատանքն ավելի բարձր աստիճանի և ապահովելով ներկուսակցական դեմոկրատիայի և բոլշևիկյան ինքնաքննադատության լայն ծավալումը մեր աշխատանքների բոլոր բնագավառներում, ավելի ամրացնելով և համախմբելով կուսակցական կազմակերպությունը Հայկոմկուսի բոլշևիկյան Կենտկոմի և Յերկոմի շուրջը, անշեղ կիրառելով կուսակցության գլխավոր գիծն և անհաշտ պայքար մղելով այդ գծի անաղարտության համար բոլոր տեսակի և գույնի թեքումների դեմ և հատկապես գլխավոր վտանգ աջ թեքման դեմ, ջախջախելով դասակարգային թշնամու և նրա գործակալության բոլոր վոտնձգությունները մեր առաջխաղացման ճանապարհին,—Յերևմակերպությունը Հայկոմկուսի բոլշևիկյան Կենտկոմի և Յերկոմի ղեկավարությամբ կշարունակի համառ պայքար ընկ. Ստալինի վեց ցուցմունքների գործնական կիրառման և հնգամյակի 4-րդ ավարտական տարվա արդֆինպլանները Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին կատարելու համար, յերկրորդ, անդասակարգ-սոցիալիստական հասարակարգի կառուցման հնգամյակը հաղթականորեն թևակոխելու համար:

---

## Հ. Կ. (Բ) Կ. ՑԵՐՔԱՂԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՅԻՍԻ 28-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ԱԳԻՏԱՑԻՈՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ի կատարումն Հայկոմկուսի Կենտկոմի մայիսի 11-ի և Ցերկոմ բյուրոյի մայիսի 12-ի վորոշումների՝ կազմակերպչական-կուսակցական, ագիտացիոն-մասսայական և դաստիարակչական աշխատանքներն ավելի բարձր աստիճանի հասցնելու մասին, վորպես կոնկրետ ձեռնարկումներ Ցերկոմի բյուրոն անհրաժեշտ է համարում՝*

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ—ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ

1. Բացի մայիսի 19-ի բջիջների դռնբաց նիստերից, «Բոլշևիկ» ժուռնալի (№ 5—6) առաջնորդողը լայն քննության առնել կուսխմբակներում: Այդ նպատակով հունիսի 1-ը հայտարարել կուսխմբակների օր, կուսխմբակների նիստերին ուղարկելով Կենտկոմի, Ցերկոմի, ԿՎՀ-ի, ԲՎՀ-ի անդամներին և պատասխանատու աշխատողներին—տեղերում կուսխմբակների աշխատանքներին ծանոթանալու, նրանց հետ զրույց կազմակերպելու, գործնական օգնություն ցուցաբերելու և հրահանգելու համար:

2. Հունիսի 11-ին հրավիրել Ցերկոմի պլենում քաղկազմակերպության ակտիվի մասնակցությամբ, ուր հատկապես քննության առնել կազմակերպչական-կուսակցական, ագիտ-մասսայական և դաստիարակչական աշխատանքների ներկա վիճակը Ցերքաղկազմակերպության բջիջներում և այն ավելի բարձր աստիճանի հասցնելու խնդիրը — կապելով մայիսի 19-ի, 21-ի և 27-ի կուսօրերի և հունիսի 1-ի կուսխմբակների նիստերի արդյունքների հետ:

3. Կուսխմբակներին և կուսկազմակերպիչներին ցեխում, բրիգադում օգնելու, ցուցմունքներ տալու, հրահանգելու և «սուր հարցերին» պատասխանելու գործը կազմակերպելու համար Կենտկոմի, ԿՎՀ-ի, Ցերկոմի և ԲՎՀ-ի անդամներին մշտապես կցել առանձին կուսխմբակներին, նրանց ամբողջապես պատասխանատու դարձնելով կուսխմբակների աշխատանքների համար:

4. Կազմակերպել ռեյդ-բրիգադներ կուսմասսայական աշխատանքն առանձին ձեռնարկություններում ստուգելու և տեղում կուսստորին օղակներին գործնական աջակցություն ցույց տալու համար (մասնավորապես՝ գիշերային հերթափոխություններում):

5. Մինչև հունիսի 5-ը վերջնականապես ավարտել կուսստորին օղակների ստրուկտուրայի վերակառուցումը:

6. Կարբիտի գործարանի որինակով՝ քաղկազմակերպության կոմբջիջներում սկսել արտադրության մեջ կոմունիստների ավանգարդային դերի ստուգատեսը, կապելով այդ աշխատանքն արտադրության մեջ կուսակցական ուժերի ճիշտ բաշխման հետ:

7. Ուսումնասիրել քաղկազմակերպության ակտիվի, կոմբջիջների քարտուղարների, կուսկազմակերպիչների ու բջջային սեկտորների ղեկավարների կազմը—նրանց ջոկելու, վերապատրաստելու, նպատակահարմար օգտագործելու և թույլ օղակները նոր, պատրաստված, ընդունակ ուժերով ամրացնելու համար:

8. Հունիսի 15-ից—25-ը կազմակերպել ստորին կուսակտիվի վերապատրաստման տասնօրյա շերտավորված դասընթացքներ (կոմբջիջի քարտուղարների, սեկտորների ղեկավարների, կուսկազմակերպիչների համար) ընդգրկելով այդ դասընթացքներում 1500 հոգի:

9. Ուսումնասիրել քաղկազմակերպության բոլոր բջիջները և շերտավորված ղեկավարության միջոցով ու համեմատաբար թույլ և հիվանդ բջիջներին կազմակերպության ղեկավար ակտիվին կցելով (պարտավորեցնելով վերջինիս բջջային աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունենալ) ուժեղացնել բջիջների ներկուսակցական կազմակերպչական, ագիտ-մասսայական ու դաստիարակչական աշխատանքները:

10. Ստուգել կուսակցական ղեկավարության դրվածքի ճշտությունը ձեռնարկություններում, տնտեսական ղեկավարությունը փոխարինելու տարրերը և միանձնյա ղեկավարության խախտումները յերևան հանելու և ուղղելու տեսանկյունից:

11. Կոնսերվի գործարանում սկսված կուսթեկնածուների հետ որինակելի աշխատանք կազմակերպելու և կուսանդամ ռեզերվ պատրաստելու աշխատանքները խորացնել և փորձը փոխադրել մյուս բջիջները:

Հունիսի 4-ին հրավիրել արտադրական ձեռնարկների, տրանսպորտի և շինարարական բջիջների, իսկ հունիսի 16-ին հիմնարկային և ԲՈՒՀ-ական, բանֆակների ու տեխնիկումների բջիջների կուսթեկնածուների ընդհանուր ժողովներ, (առանձին-առանձին), թեկնածուների մեջ տարվող աշխատանքների համար կոնկրետ միջոցներ մշակելու, ինչպես նաև անդամ փոխադրելու նրանց պատրաստակամությունն ստուգելու նպատակով:

12. Քաղաքի բոլոր բջիջներում կազմակերպել բոլոր կոմունիստների կուսպարտականությունները վերանայելու գործը—նպատակ ունենալով բոլոր կոմունիստներին կոնկրետ պարտականություններ տալ: «Խորհ. Հայաստան»-ի և բազմատիրաժ թերթերի, ինչպես նաև պատի թերթերի միջոցով կազմակերպել առանձին կոմունիստների կուսպարտականությունների ստուգատես-մրցականչ կուսպարտականությունների կատարման աստիճանը պարզելու և փորձը փոխանակելու համար:

13. Մայիսի 19-ի 21-ի և 27-ի կուսօրերի փորձը հաշվի առնելով կազմել կոնկրետ պլան կուսօրերի նախապատրաստության համար: Մամուլի միջոցով կազմակերպել կուսօրվա նախապատրաստման փորձի փոխանակում:

14. Ցերկոմի մի շարք կազմ-խորհրդակցությունները հրավիրել ձեռնարկություններում և կազմ-խորհրդակցություններում լսել առանձին կուսկոլեկտիվների, ցեխ-բջիջների, կուսխմբակների ղեկա-

ցումները կազմակերպչական կուլտմասսայական աշխատանքների հարցերի շուրջը։

15. Կազմակերպել քաղկազմակերպության կոմբջիջների կոնկրետ-գործնական ոգնությունն իրենց յենթաշեֆ գյուղերի կոմբջիջերի կազմակերպչական-կուսակցական, ագիտացիոն-մասսայական և դաստիարակչական աշխատանքներում։

16. Առաջավոր կուսկազմակերպությունների փորձի փոխանակման նպատակով՝ կապ հաստատել Թիֆլիսի 26-ի անվան ռայկոմի, Բաքվի Վորոշիլովսկի ռայոնի և Լենինականի քաղկոմի հետ, ինչպես նաև առանձին գործարանների կուսկազմակերպությունների միջև։ Այդ նպատակով հրավիրել կուսստորին ոդակների խորհրդակցություններ, կոնֆերանսներ և հավաքներ։

17. Առանձնացնել 3 բջիջ և 5 կուսխմբակ, ուր կազմակերպել կուսաշխատանքի օրինակելի փորձը և այդ փորձը փոխադրել մյուս բջիջները և կուսխմբակները։

18. Կազմակերպել կոմբջիջների և ցեխ-բջիջների կոնկրետ-գործնական ոգնություն և օպերատիվ ղեկավարություն կուսխմբակների և կուսկազմակերպիչների նկատմամբ։

19. Կարգավորել կուսակցական ինֆորմացիայի և հաշվառման գործը Յերկոմում, վորի հիման վրա ծավալել լայն աշխատանք այդ գործը բջիջներում բարձր աստիճանի հասցնելու համար, բջիջներում ստեղծելով ինֆորմատորների և հաշվետարների ամուր և վորակյալ կադր։

20. Կոմբջիջների քարտուղարներին, ակտիվին, կուսկազմակերպիչներին և սեկտորների ղեկավարներին ոգնելու նպատակով կազմակերպչական-կուսակցական, ագիտացիոն-մասսայական և դաստիարակչական աշխատանքի հարցերի շուրջը կուսկաբինետում կազմակերպել ամենորյա կոնսուլտացիա։

## ԱԳԻՏ—ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ

1. Ագիտացիոն-մասսայական աշխատանքը կուսխմբակ փոխադրելու տեսանկյունով, հանձնարարել Քաղկոմի Ագիտմասբաժնին՝ գործարաններում, տրանսպորտում, արտադրական ձեռնարկների ցեխերի և շինարարության վրա անցկացնել ագիտացիոն մասսայական աշխատանքների դրվածքի ստուգատես։

2. Առաջարկել գործարանային և արտադրական ձեռնարկների կուսբջիջներին կազմակերպել ստուգատեսի աշխատանքը հատուկ բրիգադների միջոցով։ Ստուգատեսի ընթացքում կուսխմբակներում ստեղծել ագիտ-մաս-կազմակերպիչների ինստիտուտ, կայուն և պատրաստված կոմունիստներից։

3. Բոլոր խոշոր գործարաններում, արտադրական ձեռնարկներում և կայարանում կազմակերպել ագիտ-կոլեկտիվներ, ապագայում նրանց ցանցը ավելի ընդարձակելու պայմանով։

4. Քաղկոմի ագիտմասբաժնին՝ բոլոր ներքին ոդակներում խմբակային ագիտատորների և ագիտ-կոլեկտիվների կազմակերպումը վերջացնել հուլիսի 1-ին։ Հուլիսի 1-ին հրավիրել խմբակային ագիտատոր-



ների համաքաղաքային հավաք՝ ագիտմաս-աշխատանքների հերթական խնդիրներով։

5. Ագիտ-մասբաժնին՝ խմբակային ագիտատորների և ագիտ-կոլեկտիվների պատրաստման և վերապատրաստման համար հրավիրել 3 որյա կուրս-դասընթացներ։

6. Գործարանների և արտադրական ձեռնարկների ագիտ-կոլեկտիվներում և խմբակային ագիտատորների միջև կազմակերպել փոխադարձ կապ, փորձի փոխանակման գործը կարգավորելու համար։

7. Ագիտ-մասբաժնին՝ պարբերաբար հրավիրել գործարանային, շինարարական, տրանսպորտային և արտադրական ձեռնարկների խմբակային ագիտատորների և ագիտ-կոլեկտիվների դիֆերենցիալ հավաքներ, ուր քննության յենթարկել արտադրության տվյալ բնագավառի ագիտ-մաս-աշխատանքների ուժեղացման հերթական խնդիրները՝ մասնավորապես քաղաքական լուրջ ագիտացիայով ամեն մի բանվորի ընդգրկելու ուղղությամբ։

8. Ցեխերում, բրիգադներում և ոդակներում ագիտացիոն-մասսայական աշխատանքը կազմակերպել այնպես, վոր աշխատողների միջոցով հաշվի առնվի բանվորների տրամադրությունները և պահանջները և նրանց հարցումներին տրվի բավարար և սպառիչ պատասխաններ։ Այդ նպատակով պրակտիկայի յենթարկել 5–10 րոպեյի տևողությամբ ցեխային հավաքները, վորի ընթացքում լուսաբանել որվա քաղաքական-տնտեսական նորությունները։

9. Ագիտ-մասբաժինը՝ ամիսը 1 անգամ գործարաններում, արտադրական ձեռնարկներում, շինարարության վրա և տրանսպորտում կազմակերպել բանվորների հարցերի պատասխանների յերեկո։ Այդ աշխատանքը կազմակերպված տանելու համար խմբակային աշխատողները նախորոք հավաքում են բանվորներից հարցերը, իսկ Քաղկոմի Ագիտ-մաս-բաժինը ուսումնասիրելով՝ ուղարկում է պատասխանատու պատրաստված կոմունիստների-զեկուցելու։

10. Աշխատանքի սոցիալիստական ձևերի և մեթոդների ծավալմանը զարկ տալու նպատակով, սոցմրցման-հարվածայնության, պարգևատրումների, կարմիր կամ սև տախտակ բարձրացնելու ամբողջ աշխատանքի ծանրությունը ցեխ, բրիգադ և ոդակ իջեցնել։ Ագիտատորների և սոցմրցման գործի կազմակերպիչների միջոցով կազմակերպել և կարգավորել հաշվառման գործը։

11. Ցեխերում անհաշվարկի բրիգադներ, տեխֆին. և հանդիպական պլաններ կազմակերպելու գործը բարձր աստիճանի փոխադրելու համար, առաջարկել Ագիտմասբաժնին՝ ագիտացիաների և ագիտ-կոլեկտիվների գործունեյության կենտրոնում դնել այդ խնդիրները։ Յերևանի գործարաններում մինչև հուլիսի 1-ը պետք է լայն ծավալել աշխատանքի հիշյալ սոցիալիստական ձևերը։

12. Առաջարկել Քաղկոմի Ագիտմասբաժնին՝ գործարանային և արտադրական ձեռնարկների ագիտ-կոլեկտիվների ու ագիտատորների միջոցով, ցեխերում կազմակերպել կարմիր և սև, ինչպես և քանակական և վորակական ցուցանիշների հաշվառման տախտակներ, փոխանցիկ դրոշներ, տվյալ գործարանի և մեր ընդհանուր վերելքը պատկերավոր լոզունգներ, դիագրամաներ, պլակատներ, ցեխերի պատերին ու-

նենալ տվյալ գործարանի աշխատանքի հերոս բանվորների նկարները։

13. Գործարանային, շինարարական, տրանսպորտային և արտադրական ձեռնարկների ագիտ-կոլեկտիվների և խմբակային կազմակերպիչների միջև կնքել սոցմրցման պայմանագրեր և կազմակերպել կոնկուրս լավ աշխատող միավորների միջև։

14. Ցեխերում հաճախակի լսել հին բանվորների զրույցները, ցարական և դաշնակցության տիրապետության ժամանակամիջոցի աշխատանքի պայմանների մասին։ Օգտագործել այդ զրույցները նոր բանվորների մեջ սոցիալիստական վերաբերմունք կերտելու արդյունաբերության պրոցեսի ուղղությամբ և սրել պայքարը կեղծ հարվածայնության, լոդրերի և փախչողների դեմ։

15. Լայն չափով օգտագործել գործարանային և ցեխային թռուցիկ միտինգների սիստեմը։ Նախօրոք կազմակերպել այն և միտինգներում հանդես բերել պատասխանատու ղեկավար ընկերներին։

16. Առաջարկել բջիջներին, խմբակային ագիտատորներին ազատել բոլոր տեսակի հասարակական, պրոֆմիութենական և այլ պարտականություններից, խնդիր դնել աշխատանքի պրոցեսում ստեղծել կայուն և կուսգիծը լիովին ըմբռնող խմբակային ագիտատորների կադրեր։

17. «Կենդանի մարդկանց» պահանջները ուսումնասիրելու, նրանց մեջ կուսդաստիարակչական, ագիտացիոն, մասսայական աշխատանքները ավելի ուժեղացնելու համար, կազմակերպել դիֆերենցիալ աշխատանք գյուղից նոր յեկածների, ներգաղթվածների, թեկնածուների ու հին բանվորների մեջ։

18. Ագիտմասբաժին՝ Բաղկոմում և տեղերում (գործարանային, տրանսպորտային, շինարարական) խմբակային ագիտատորների համար կազմակերպել կոնսուլտացիաներ, ագիտմասսայական աշխատանքների հերթական խնդիրների շուրջը։

19. Հատուկ աշխատանք տանել ընկ. Ստալինի ճառի տարեդարձի առթիվ։

## ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ-ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ

Կազմակերպչական-կուսակցական, ագիտացիոն-մասսայական և դաստիարակչական աշխատանքների հետագա արմատական վերակառուցման և ուժեղացման համար, բացի տարվող և ծրագրված աշխատանքներից անհրաժեշտ գտնել ծավալելու կուլտպրոպ աշխատանքների գծով հետևյալը՝.

1. Կուլտ-պրոպ աշխատանքների համար, ամեն մի կուսխմբակում առանձնացնել կուլտ-պրոպ-կազմակերպիչների հատուկ ինստիտուտ։

2. Այդ կապակցությամբ կուլտ-պրոպ աշխատանքը վերակառուցել այն հաշվով, վոր նա (կուլտ-պրոպ աշխատանքը) իր բոլոր գծերով իրականում յերեսով դառնա դեպի կուսխմբակը, օղակը, ցեխը, բրիգադը, հարվածային բանվորը։

Հունիս ամսին հրավիրել բջիջների և կուսխմբակների կուլտպրոպների 3–5 օրյա խորհրդակցություն-դասընթացքներ, վորտեղ քննության առնել կուլտպրոպ աշխատանքների ներկա խնդիրները, նրա կառուցվածքը, բովանդակությունը բջիջում, խմբակում և այլն և այդ առումով բջիջի, կուսխմբակի կուլտպրոպի կոնկրետ անելիքները։



3. Բացի գործող դիշերային կուսհամալսարանից և մարքսիզմի-լենինիզմի կուրսերից 32/33 ուստարում կուսստորին ակտիվի համար կազմակերպել յերեք հատ նորմալ տիպի դիշերային կուսխորհրդային դըպրոցներ, իր համապատասխան ցիկլներով։

4. Գտնել անհրաժեշտ բջիջի կուլտ-պրոպների սիստեմում առանձնացնել հեռակա ուսուցման հատուկ կազմակերպիչ։ Կուսկաբինետին և հեռակա ուսուցման քաղկազմակերպիչին՝ (Թորոսյանին) գումարել բջիջային կազմակերպիչների 3 օրյա հրահանգչական կուսխորհրդակցություն։

Կազմակերպել հատուկ ռադիոլսարաններ (իր վարիչով, կահավորումով, կոնսուլտացիայով և այլն) զեկուցումների, դասախոսությունների, ժողովների, հավաքների և այլն կոլեկտիվ լսումը հետևյալ կետերում՝ Ֆանաքեռդեսի, Ղոեբի, Ցերկաթգծի, Ջեթ-ռճառ, Բամբակատեխ, Կարի, Կոնսերվի, Մեխանիկական գործարանում, Հայնարկոոպի ցանցի և քաղաքի բոլոր ակումբներում։

Հրավիրել ռադիո-լսարանների և համապատասխան կոմբջիջների կուլտ-պրոպների հատուկ հրահանգչական խորհրդակցություն—սեմինար։

5. Նախապատրաստել և հրավիրել հատուկ կուս. կոմյերիտական կոնֆերանս, նվիրված մարքս-լենինյան դաստիարակության խնդիրներին։

Նույն տիպի կոնֆերանս գումարել նվիրված հոկտեմբերիկների և պիոներ դաստիարակության և պիոներ կազմակերպության դաստիարակչական աշխատանքների հարցերին։

6. Կուսակտիվի համար սիստեմատիկաբար կազմակերպել տեսական զեկուցումներ-դասախոսություններ, տեսական մեկ-յերկու օրյա հավաքներ, 3–5–10 օրվա տեսական կոնֆերանսներ և այլն։

Առաջին հերթին մշակել՝

1. Դասակարգերը և դասակարգային պայքարը 2-րդ հնգամյակում։
2. Արտադրական ուժերը և արտադրողական փոխհարաբերությունները 2-րդ հնգամյակում։
3. Ֆինանսները, փողային շրջանառությունը և առևտուրը 2-րդ հնգամյակում։
4. Դաշնակցության սոցիոլոգիայի և մեթոդոլոգիայի քննադատությունը։
5. Պատմական ֆրոնտի հերթական խնդիրները։
6. Կուլտ-հեղափոխության և կենցաղի խնդիրները 2-րդ հնգամյակում։

7. Գտնելով միանգամայն անհրաժեշտ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների ուսումնասիրությունը կուս. և ԼԿՅԵՄ Ցերկոմի անդամների և թեկնածուների կողմից, կիրառել Ցերկոմի կուլտ-պրոպի հանձնարարությամբ Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի առանձին հատորների, ինչպես նաև առանձին թեմաների պարտադիր մշակման ձևը Ցերկոմի անդամների համար։

Ցերկոմի կուլտ-պրոպին՝ սիստեմատիկորեն հրավիրել մարքսիզ-

մի-լենինիզմի կլասիկների աշխատությունների առանձին հատորներ ուսումնասիրողների արդյունքային կոնֆերանսներ:

8. Ժամանակ առ ժամանակ հրավիրել համաքաղաքային և ըստ արտադրության ճյուղերի կուսթեկնածուների ընդհանուր ժողովներ, որտեղ լսել հատուկ զեկուցումներ-դասախոսություններ ակտուալ տնտեսական-քաղաքական, կուս. և Կոմինտերնի պատմության խնդիրների շուրջը:

9. Վերակառուցել պատի թերթերի աշխատանքները այն հաշվով, որ բացի գործարանային ընդհանուր թերթից ամեն մի ցեխ, բրիգադ ունենա իր պատի թերթը: Պատի թերթի ճնշող մեծամասնությունը վերածել ամենօրյա կամ հնգօրյա օրգանների:

Կուլտ-պրոպին՝ պատի թերթերի օրինակելի վերակառուցումն անցկացնել Մեխանիկական, Կարբիտի, Կոնսերվի գործարաններում և Ղաժրում, նպատակ ունենալով վերակառուցման դրական փորձը մասսայականորեն փոխադրել մնացած հիմնարկ-ձեռնարկությունները:

Բացի հրատարակվող չորս գործարանային բազմատիրաժ տպագիր թերթերից, նախապատրաստել և հրատարակել գործարանային բազմատիրաժ թերթ Կարի գործարանի համար:

Նախապատրաստել Յերկոմի և Յերքաղխորհրդի օրգանի ամենօրյա թերթ, «Հարվածային Յերևան»-ի հրատարակումը:

10. Տանել նախապատրաստական աշխատանք կազմակերպելու համար տեխնիկայի տիրապետելու (ԶՈՏ) ընկերություն:

11. Հ.Կ.(բ)Կ. Կենտկոմի առաջ խնդիր դնել Յերևանում գտնվող դպրոցական-ձեռնարկությունների միջին օղակի (ռաբֆակ, տեխնիկումներ, ֆաբզավուչներ և այլն) հասարակագիտական առարկաների ղեկավարությունը հանձնել Յերկոմին:

12. Վերակառուցել Յերկոմի կուլտ-պրոպի ապարատը՝ կազմելով 1) լենինիզմի, կուսքաղաքականության և արտադրական-տեխնիկական մասսայական պրոպագանդայի սեկտոր, 2) ժողկրթության և միջնակարգ դպրոցներում լենինիզմի պրոպագանդայի սեկտոր, 3) մամուլի, արվեստի և գործարանների կուլտուրական սպասարկման սեկտոր:

---



# Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

## կուս. թեկնածուների մարքս-լենինյան դաստիարակության խնդիրները և նրանց կուսակցական-գործնական աշխատանքների մեջ ներգրավելու կոնկրետ միջոցառումները:

(ԿՈՒՍԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ 1932 Թ. ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ՇՆՐՏԱՎՈՐՎԱԾ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Յերկոմի բյուրոն քննության առնելով Յերևանի արտադրական, շինարարական և տրանսպորտային կոմբջիջների կուսթեկնածուների շքերթավորված հավաքների նյութերը և բանաձևերը, արձանագրում է, որ լավագույն հարվածային բանվորների հաշվին կուսկազմակերպության շարքերի հսկայական աճման կապակցությամբ բացառիկ կարևոր նշանակություն է ստանում կուսակցության մեջ նոր ընդունվածների, հատկապես կուսթեկնածուների կուսակցական-քաղաքական դաստիարակչական աշխատանքի ուժեղացումը:

Յերկոմի բյուրոն նշում է, որ այդ կարևոր խնդիրը կազմակերպության բոլոր բջիջների ամենօրյա ուշադրության առարկան չի դարձել, որ բջիջներում նկատվում են կուսթեկնածուների հետ տարվող աշխատանքի և նրանց մարքս-լենինյան դաստիարակության օպորտունիստական թերագնահատման տենդենցներ, որի հետևանքով կուսթեկնածուների հետ տարվող աշխատանքը կոմբջիջներիում չի դրված իր անհրաժեշտ բարձրության վրա և թեկնածուների կուսակցական-դաստիարակչական աշխատանքի ներկա վիճակը չի ապահովում կուսթեկնածուների լավագույն մասի պատրաստումը նրանց կուսակցության իսկական անդամ փոխադրելու համար թեկնածուական ստաժը լրացնելուց անմիջապես հետո, ինչպես նաև չի ապահովում կուս. շարքերը կուսակցության համար այն տարրերից մաքրելու գործը, վորոնք թեկնածուական ստաժի ժամանակամիջոցում չեն արդարացրել իրենց կուսակցության իսկական անդամ փոխադրելու համար:

Յելնելով դրանից Յերկոմի բյուրոն նշում է, որ կուսթեկնածուների կուսակցական-դաստիարակչական աշխատանքների ուժեղացման համար անհրաժեշտ է կոմբջիջների ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ կարևորագույն խնդիրների վրա:

1. Բոլոր թեկնածուներին գլխովին ընդգրկել կուսուսուցման ցանցում, ուժեղացնելով նրանց մարքս-լենինյան դաստիարակության գործը: Տվյալ գործում աշխատանքի հիմնական օղակը դիտել կուսթեկնածուական քաղխմբակը:

2. Բոլոր կուսթեկնածուներին ընդգրկել կուսակցական-գործնական աշխատանքներում և սիստեմատիկաբար ստուգել կատարած աշխատանքը, ուսումնասիրել նրանց անհատական հատկությունները և ուժեղաց-

նելով կոմբջիջների ամենօրյա օգնությունը թեկնածուների նկատմամբ նրանց կատարած աշխատանքում, բարձրացնել նրանց ակտիվությունը ներկուսակցական կյանքում և ավանգարդային դերն արտադրության մեջ:

3. Կոմբջիջները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները ապահովելու թեկնածուների հաճախումը կուսակցական ժողովներին, այդ նպատակով անհրաժեշտ է թեկնածուների համար կազմակերպել զրույցներ, ժողովի օրակարգի հարցերի շուրջը, բացատրել նրանց ժողովում քննության դրված հարցերի նշանակությունը և այդպիսով բարձրացնել նրանց ակտիվությունը կուսակցական ժողովներում:

4. Կոմբջիջները պետք է հաճախակի ստուգեն թեկնածուների կուսակցական կարգապահության աստիճանը, պարզելով կուսանդամավճարների ժամանակին մուծելու հանգամանքը, ժողովներին հաճախելը, հանձնարարված պարտականությունների կատարումը և այլն:

5. Կոմբջիջները պետք է կուսթեկնածուներին կցեն ավելի կայուն և պատրաստված կուս. անդամներին—նրանց ուսումնասիրելու, պատրաստելու, հանձնարարված աշխատանքում և կուսուսուցման գործում օգնելու, կուսակցության ընթացիկ քաղաքականությունը և «սուր հարցերը» պարզաբանելու համար:

6. Հանրակացարաններում, հատկապես շինարարական օբյեկտներում, թեկնածուների հետ կազմակերպել զրույցներ, թերթերի բարձրաձայն ընթերցումներ և նրանց կապելով գրադարան-ընթերցարանների հետ, սովորեցնել ինչ գիրք և ինչպես կարդալ: Պարտավորեցնել բոլոր թեկնածուներին պարտադիր կարգով բաժանորդագրվել իր մայրենի լեզվով հրատարակվող մեկ թերթի և ժուրնալի ու սիստեմատիկաբար կարդալ:

7. Հաճախակի կազմակերպել հին բոլշևիկների զրույցներ, թեկնածուների հետ անցյալ հեղափոխական պայքարի, կուսակցության պատմության, վորպես բանվոր դասակարգի ավանգարդի դերի և այլն հարցերի շուրջը: Այդպիսի զրույցներ կազմակերպել նաև կուսթեկնածուների, կանանց և ծնողների հետ: Առաջին զրույցը կազմակերպել հունիս ամսում:

8. Կարգավորել կուսթեկնածուների հաշվառման գործը Ցերկոմում և բջիջներում, ուսումնասիրել թեկնածուական ստաժն անցնելու պատճառները և այդ հիման վրա ապահովել յուրաքանչյուր թեկնածուին անդամ փոխադրելու համար պատրաստելու գործը: Այդ նպատակով անհրաժեշտ է հրավիրել թեկնածուական ստաժը լրացրած կուսթեկնածուների խորհրդակցություններ: Վճռական պայքար մղել անդամ փոխադրելու մասին թեկնածուների դիմումների ձգձգումների դեմ:

9. Կուսստորին ողակների, կուսխմբակների կարևորագույն խնդիրը համարելով կուսթեկնածուների կուսակցական-դաստիարակչական աշխատանքը, անհրաժեշտ է կուսկազմակերպիչների ներգործարանային հատուկ խորհրդակցությունների միջոցով սրել նրանց ուշադրությունը թեկնածուների հետ տարվող աշխատանքի վրա:

10. Կոմբջիջները թեկնածուների մեջ կուս. պարտականությունները բաշխելիս պետք է նկատի ունենան յուրաքանչյուր թեկնածուի ունակությունները, աշխատանքի փորձառությունը և այդ պարտականության միջոցով թեկնածուին քաղաքական դաստիարակություն տալու



հանգամանքը: Պետք է սիստեմատիկաբար ստուգել կուսթեկնածուների պարտականությունների կատարումը և մանրակրկիտ ուսումնասիրել նրանց անհատական հատկությունները պարզելու՝ «թե վոր չափով կուսակցության թեկնածուն ընդունակ է իրագործելու կոմունիստի ավանգարդային դերը արտադրության մեջ, թե զուտ արտադրական և թե քաղաքական տեսակետից» («Բոլշևիկ» № 5–6):

11. Ինչպես կոմբջիջներում, այնպես էլ Ցերկոմում պարբերաբար լսել կուսակցական առանձին ոգակի և բջիջի զեկուցումը թեկնածուների մեջ տարվող աշխատանքների մասին: Անհրաժեշտ համարել ոգոստոս ամսում անցկացնել թեկնածուների հետ տարվող աշխատանքների ստուգատես այս վորոշումների կատարման ստուգման և աշխատանքի այդ բնագավառի դրությունը պարզելու համար:

12. Անհրաժեշտ գտնել բջիջներում ծավալել լայն աշխատանք (հատուկ խմբակների կազմակերպում) այն ուղղությամբ, վորպեսզի բոլոր կուսթեկնածուները մինչև սեպտեմբերի 1-ը կարդան և ուսումնասիրեն կուսակցության, Կոմինտերնի ծրագիրն ու կանոնադրությունը և Կոմունիստական Մանիֆեստը, վորից հետո հատուկ կուրս կոնֆերանսի միջոցով ստուգել սույն վորոշման կատարումը:

13. Բացի կուսուսուցման ցանցում սովորելուց, պարտավորեցնել կուսթեկնածուներին անհատական կարգով ձեռնարկել կուսակցության պատմության ուսումնասիրության գործին:

14. Բջիջները պետք է հոգեն, վորպեսզի բոլոր թեկնածուներն ունենան սոցմրցման անհատական պայմանագրեր, հատուկ միջոցառումներով պետք է բարձրացնել աշխատանքի դիսցիպլինան, ապահովելով նրանց առաջավոր դերն արտադրության մեջ: Կոմբջիջների ժողովներում լսել թեկնածուների զեկուցումները իրենց սոցմրցման պայմանագրերի կատարման առթիվ: Կոմբջիջները հատկապես պետք է հետևեն, վորպեսզի պլաններն իր ժամանակին հասցվեն դազգյահին—կուսթեկնածուներին և սահմանեն ամենօրյա ստուգում կուսթեկնածուների պլանների կատարման համար՝ առանձին դիագրամաների և պլակատների միջոցով ցուցադրելով գործարանի աչքի ընկնող տեղերում և ակումբներում:

15. Պարտավորեցնել բոլոր կուսթեկնածուներին սիստեմատիկ հաճախել տեխնիկայի ուսումնասիրության խմբակները և վերացնել իրենց տեխնիկական անգրագիտությունը: Կոմբջիջները կուսթեկնածուներին անդամ փոխադրելիս պետք է իմիջիայլոց նկատի ունենան յուրաքանչյուր կուսթեկնածուի աշխատանքն իր տեխնիկական և այբենական անգրագիտության վերացման ուղղությամբ:

16. Ցանկալի համարել քաղաքի կոմբջիջների միջև սոցմրցման պայմանագրերի կնքումն, կուսթեկնածուների հետ տարվող աշխատանքը լավ կազմակերպելու և աշխատանքի փորձը փոխանակելու համար:

17. Կուսթեկնածուներին կուսակցական-գործնական աշխատանքներում ընդգրկելու և պատրաստելու տեսակետից-պարտավորեցնել «Արարատ» գործարանի կուսբյուրոյին՝ կազմել 2 ամսյա կոնկրետ ծրագիր կուսթեկնածուներին զեկուցումներ հանձնարարելու վերաբերյալ:

18. Պարտավորեցնել Կաշու գործարանի կուսկոլբյուրոյին կազմել ծրագիր կուսթեկնածուների աշխատանքն ու հանգիստը բնակարաններում ուսումնասիրելու, նրանց ժամերն ավելի ռացիոնալ օգտագոր-

2328

ծելու համար։ Այդ ուղղությամբ առանձին ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնություններին պատկանող Թեկնածուների վրա, կազմակերպելով հատուկ գրույցներ, զեկուցումներ, Թերթերի բարձրաձայն ընթերցումներ նրանց մայրենի լեզվով և սովորել նրանց աշխատանքի և հանգստի ժամերի բյուջեն այն բարելավելու համար։

19. Պարտավորեցնել Կոնսերվի գործարանի կուսկոլբյուրոյին՝ բջիջների առաջիկա նիստերում հատուկ քննության առնել, իսկ պատի Թերթի հերթական յերեք համարում լուսաբանել կուսթեկնածուների հետ տարվող աշխատանքի վիճակը՝ և կոնկրետ, գործնական միջոցառումներ մշակել կուսթեկնածուների կուսակցական-դաստիարակչական աշխատանքներն ուժեղացնելու համար։ Այդ տեսակետից սոցմրցման պայմանագիր կնքել Ձեթ-օճառ գործարանի կոմբջիջի հետ։ Այս աշխատանքների համար անձնապես պատասխանատու դարձնել ընկ. ընկ. Արամ Գեվորգյանին և Յե. Շահինյանին։

20. Պարտավորեցնել Մեխանիկական գործարանի կոմբջիջի բյուրոյին 5 օրվա ընթացքում ստուգել Թեկնածուների մասնակցությունը քաղուսուցման զպրոցներին և ստուգման արդյունքները բջիջի բյուրոյի ձեռնարկած միջոցառումների հետ ներկայացնել Ցերկոմին։ Այս աշխատանքների համար պատասխանատու դարձնել ընկ. ընկ. Մովսես Ոստոմյանին և Հմայակ Դիլանյանին։

21. Հանձնարարել Ծխախոտի գործարանի բջիջի բյուրոյին 5 օրվա ընթացքում ստուգել և պարզել, թե կուսթեկնածուներից քանի հոգի Թերթ չեն ստանում, պարտավորեցնելով բոլոր Թկնածուներին Թերթ ստանալ։

22. Ցերքաղկոմի կուլտ-պրոպ բաժնի միջոցով ուսումնասիրել Արաբկիրի պատի Թերթը՝ կուսթեկնածուների հետ տարվող աշխատանքի լուսաբանությունը կարգավորելու տեսակետից, լսել խմբկոլի զեկուցումը Ցերկոմի բյուրոյում։

23. Հանձնարարել Փայտամշակման գործարանի կուսկոլբյուրոյին՝ հրավիրել կուսթեկնածու պրոգուլշչիկների առանձին խորհրդակցություն և միջոցներ ձեռք առնել աշխատանքի դիսցիպլինան Թեկնածուների մեջ բարձրացնելու ուղղությամբ։

---



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ


1. Նախաբան . . . . . . . . . . . . . . . . . 3
2. Բջիջների կուսակցական մասսայական աշխատանքի ներքական խնդիրները . . . . . . . . . . . . 5
3. ՀԿ(Բ)Կ. Ցերքաղկոմի 3-րդ պլենումի վորոշումները . . . 23
4. ՀԿ(Բ)Կ. Ցերքաղկոմի բյուրոյի 1932 թ. մայիսի 28-ի վորոշումը կուսաշխատանքների վերակառուցման մասին . . . . 32
5. ՀԿ(Բ)Կ. Ցերքաղկոմի բյուրոյի 1932 թ. հունիսի 9-ի վորոշումը կուսթեկնածուների մասին . . . . . . . . 39


---


Սրբագրեց՝ Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Հրատ. 2263 Գլավլիտ 7542 (բ) Պատվեր 2156 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 22 հունիսի Ստ. Ֆ. Ա.
Ստորագրված է տպագրելու 27 հունիսի 1932 Թ.

# ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ 24 վերևից տող 2. տպված է «որ բոլոր բանվորները դեռևս գըլխովին չեն ընդգրկված մեր քաղաքական ներգործության տակ»... պետք է լինի «որ ոչ բոլոր բանվորներն են գլխովին ընդգրկված մեր քաղաքական ներգործության տակ»:

Եջ 26 ներքևից տող 7. տպված է «կուսխմբակների աշխ—ծրագրեր կազմելու համար», պետք է լինի «կուսխմբակների աշխ—ծրագրերը կազմելու գործին աջակցելու համար»:

Եջ 27 վերևից տող 15. տպված է «կուսխմբակում յուրաքանչյուր կոմունիստին դարձնել աշխատանքի կոնկրետ բնագավառի կազմակերպիչ (կուսաճման կազմակերպիչ, ագիտատոր, պրոպագանդիստ, սոցմրցման կազմակերպիչ, ինֆորմատոր և այլն)» պետք է լինի «կուսխմբակում յուրաքանչյուր կոմունիստին պետք է կուսակցական կոնկրետ պարտականություն տալ (խմբակի անդամներից մեկին հանձնարարել կուսաճման և սոցկազմի կարգավորման գծով տարվող աշխատանքը, մյուսին՝ խմբակի անդամ—թեկնածուներին և անկուսակցական բանվորներին քաղդպրոցներում ընդգրկելու գործը, երրորդին՝ դազգյահների խնամքի և պահպանության գործը, չորրորդին՝ նյութերի խնայողության համար և խոտանի դեմ պայքարի գծով տարվող աշխատանքը, հինգերորդին՝ ագիտատոր, վեցերորդին՝ պրոպագանդիստ, յոթերորդին՝ ինֆորմատոր) և այլն»:

Եջ 29 ներքևից տող 17. տպված է «հոկտեմբերի 1—ը», պետք է լինի «հուլիսի 1—ը»:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0195586

Գինը 40 կոպ. (2[illegible] մ.)

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

**ТЯЖЕСТЬ ПАРТРАБОТЫ—В ЦЕХ И В БРИГАДУ**

Госиздат ССР Армении
Эривань—1932